

ՀՅԴ ԳԵՄ-ի Վանաձորի Ճամբարը բոլորեց իր 7-րդ տարին



Յուլիս 10-21, 7-րդ տարին ըլլալով Գանատայի ՀՅԴ երիտասարդական Միութիւնը (ԳԵՄ) իր երկշաբաթեայ ճամբարը կազմակերպեց Վանաձորի մէջ: Այս տարի ճամբարին մասնակցեցան 9-15 տարեկան 350 վանաձորցի երեխաներ, որոնք հետեւեցան ԳԵՄ-ի 17 վարիչներու պատրաստած դասընթացներուն եւ ծրագիրներուն,

որոնք կ'ընդգրկէին անգլերէն լեզուի դասընթացը, ազգային-յեղափոխական երգերու ուսուցում, ՀՅԴ պատմութիւն, ձեռային աշխատանք, մարզանք: Ճամբարի ամենօրեայ աշխատանքներուն հսկեցին Գանատայէն, Լոս Անձելոսէն եւ Երուսաղէմէն ՀՅԴ երիտասարդական միութեան 17 անդամներ:

Գանատայի Ժառանգութեան Անխարար Մելանի Ժողի, քաղաքապետ Տեհի Գոտեր եւ դաշնակցային պատգամաւորներ այցելեցին Սուրբ Յակոբի տարեկան փառատօնը

11-13 Օգոստոսի շաբաթավերջին տեղի ունեցաւ Սուրբ Յակոբի տարեկան փառատօնը, որ կը գումարակազմէր այս միջոցաւ՝ 30-ամեակին:

Երեք օրերուն ընթացքին կարգ մը քաղաքական դէմքեր հիւրաբար ներկայ եղան փառատօնին:

Շաբաթ օր NDP կուսակցութեան առաջնորդի թեկնածու Ժողմիթ Սինկ այցելեց տաղաւարները, ողջունեց աշխատակիցներն ու ներկաները եւ բացատրութիւններ տուաւ առաջնորդի դերակատարութեան մասին:

Կիրակին շատ զբաղ օր էր, փառատօնը հիւրընկալեց ժառանգութեան նախարար Մելանի Ժողին եւ դաշնակցային երեսփոխաններ՝ Սենթ Լորէն քաղաքէն էմանուէլա Լամպրոբուլտը, Ռոբալտօ-Փիերֆոնտ տարածաշրջանէն տիար Յրանգ Պէյլիսը, Եւա Նասիֆը՝ Վիմիէն եւ Ֆայսալ Ալ-Խուրին՝ Լաւալ-Լեո-Իլէն:

Քաղաքապետ Գոտերը կիրակի օր եւս այցելութիւն տուաւ Փառատօնին՝ այլ համայնքներու կողմէ ընտրուած կարգ մը քաղաքային թեկնածուներու հետ:



(Լուսանկարը՝ Արմէն Ալեմեանի)

Քաղաքապետը բեմ հրաւիրեց եւ ներկայացուց Յարութ Շիթիւհանը՝ որպէս ԱՏՈւնցիք շրջանի քաղաքապետի թեկնածու:

Նախարարուհի Մելանի Ժողի յայտնեց, թէ շատ հպարտ է սուրբահայ գաղթականներուն հանդէպ Գանատայի հայ համայնքին ցուցաբերած աջակցութեամբ:

Աւարտին տիար Ֆայսալ Խուրի բեմ բարձրանացաւ եւ ընթերցեց Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտոյի ուղերձը:

Ամառնային արձակուրդներու պատճառով «Հորիզոն»-ի գրասենեակը փակ պիտի մնայ 21 Օգոստոսէն 4 Սեպտեմբեր: Յաջորդ թիւը լոյս պիտի տեսնէ 2օրեֆշաբթի 6 Սեպտեմբերին:

2017
CR-V
STARTING FROM
\$26,890*



Image for illustration purposes only.

HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian



HONDA

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



ARZ
fine foods

the essence of mediterranean gourmet

Authentic Food Experience

ARZ Fine Foods

**You Can Find ARZ Products
At Selected, Loblaws,
Superstore, Fortinos,
Wholesale Club, & Nofrills
Stores**


- Visit arzfinefoods.com for the latest promotions.
- You can also find us on Flipp
- For employment opportunities; Email your resume to humanresources@arzfinefoods.com



Open Wounds

Armenians, Turks and a Century of Genocide

VICKEN CHETERIAN



Հեղինակ՝
Դոկտ. **ՎԻԳԵՆ ՉԵՏԵՐԻԱՆ**
PhD in History and Politics of International Relations

Հորեքշաբթի 6 Սեպտեմբեր 2017, երեկոյեան ժամը **8:00իս**,
Սոսթրեալի Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահէն ներս

Հինգշաբթի 7 Սեպտեմբեր 2017, երեկոյեան ժամը **8:00իս**.
Թորոնթոյի Հայ Կեդրոնէն ներս



Սոսթրը՝ ազատ
Հիւրասիրութիւն

Արամ Ա. Կաթողիկոսին Ներածականը

Հայկական մամուլը իր էջերուն վրայ տեղադրեց արդէն եւ համացանցի վրայ շրջագայեցաւ տեղեկատուութիւնը Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի նախաձեռնած այն խորհրդաժողովին, որ նուիրուած էր սփիւռքի այժմու եւ վաղուան սերունդներու ազգային ինքնութեան քննարկման եւ ընդհանրապէս այն ստորոգելիներուն, որոնք յենասիւնը կը կազմեն ինքնութեան մշակումին:

Այդ առիթով անդրադարձ մը՝ չորս կէտերու մէջ խտացուած.

1.- Առօրեայ-կենցաղային խօսակցութիւններու ընթացքին, յաճախ նաեւ մամուլի մէջ երեւցող գրառումներով շատեր հարցականի տակ կը դնեն նմանօրինակ խորհրդաժողովներու նպատակայարմարութիւնը՝ առարկելով, թէ քանի որ անոնք զուրկ ըլլալով ներկայացուցչական հանգամանքէ ու կառուցային խարխիւէ՝ որոշումներ տալու-գործադրելու ո՛չ լիազօրութիւնը ունին եւ ո՛չ ալ մեքենականութիւնը: Պարզապէս մասնակից ժողովականները քով-քովի կու գան, կը մէկտեղուին ժողովարարի մէջ եւ մտածումներ կը փոխանակեն ու վերջ: Ցտորո՞յ...

Ներկայացուած իր այս պարզունակ դրուածքով թերեւս իրաւացի համարուի առարկութիւնը: Բայց...

Հոյակապ է այս իմաստով մեր աննման յեղափոխականին կարգախօսը, թէ՛ «խօսքը առանց գործի մեռեալ է»: Անդրադառնանք սակայն. ի զուր չէ, որ կարգախօսը կը շեշտէ «գործ»-ին կարե-

ւորութիւնը, բայց անիկա կը պայմանաւորէ «խօսք»-ով: Որովհետեւ առաջ քան ամենայն ծնունդ կ'առնէ մտածումը, այսինքն՝ խօսքը: Մտածումի բանաձեւումէն կը յառաջանայ գաղափարը, որու ընդհանրացումէն ու ժողովրդականացումէն ետքն է միայն, որ կը յղացուի, կը ձեւաւորուի ու կը յաջողի գործը: Ուրեմն, նախ խօսքը, ապա՝ գործը:

Այսպէս եղած է բոլոր ժամանակներու մէջ, այսպէս է հիմա բոլոր մակարդակներու վրայ ու աշխատանքի բոլոր մարզերուն՝ անհատական թէ հաւաքական, միութենական թէ կուսակցական, ընկերային ու տնտեսական կամ պետական կեանքի մէջ:

Կը նշանակէ, որ խորհրդաժողովները տուեալ խնդիրներու մասին բազմակողմանի մտածումները ներդաշնակելով՝ գաղափարներ կը բերեղացեն, եզրակացութիւններ կը բանաձեւեն եւ ատով իսկ պատրաստած կ'ըլլան գործին ենթահողը:

2.- Ընդգծելի է, որ Ցեղասպանութեան պատճառով գոյաւորուած հայկական սփիւռքի հայօճախներուն ազգային-եկեղեցական կեանքի իբրեւ ղեկավար ու կեդրոնական հաստատութիւն՝ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը թերեւս միակն է, որ իր գահակալին՝ Արամ Ա. ի նախաձեռնութեամբ տարբեր երկիրներէ, տարբեր տարիքի եւ տարբեր դաւանանքի ու գաղափարի պատկանող մտաւորականներ թէ հանրային գործիչներ իր հովանիին տակ համախմբելով՝ խորհր-

դաժողովներ կը կազմակերպէ քննութեան ենթարկելու համար սփիւռքեան խնդիրներ, որոնք տարիներուն հետ աւելի հրատապ կը դառնան՝ սպառնալով սփիւռքահայու տոկոսութեան, որով եւ՝ նորահաս սերունդի ազգային ինքնութեան:

Ազգային տեսակէտէ հետզհետէ ահազնացող մարտահրաւէրներու մասին մօտաւոր գաղափար մը տալու համար կը բաւեն հետագայ մէջըրբումները՝ Արամ Ա. կաթողիկոսի եօթը մեքենագիր էջերու տարածքով ներկայացուցած խորաթափանց, այլեւ ահազանգիչ ներածականէն: Շեշտելի է ետք ինքնութեան բարդ ու զգայուն եւ այժմէական բնոյթը, կը դնէր հարցականը, թէ՛ «Ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ սփիւռքի մէջ, ի՞նչ են հայ մարդուն հայ ըլլալու ցուցանիշներն ու հայ նկատուելիութիւնը...»: Ապա կ'աւելցնէր, որ մօտաւոր անցեալին այս հարցադրումները տեսական, նոյնիսկ տարօրինակ պիտի նկատուէին, մինչդեռ այսօր այդպէս չէ: Կը մատնանշէր «մնայուն գունատութեամբ մէջ գտնուող սփիւռքի պարզած ներկայ մտահոգի պատկերը» եւ քիչ անդին կը նշէ, թէ՛ «... հայու ինքնութիւնը կազմաւորող (երէկի) հնոցները եւ զայն պաշտպանող ամբողջները սկսած են կորսնցնել իրենց հմայքն ու ուժականութիւնը: Հայու ինքնութեան կերտման ու պահպանման մէջ կենսական դեր ունեցած մեր պատմական դէպքերն ու դէմքերը սկսած են սպառել իրենց ներուժը՝ հետզհետէ դուրս մնալով մեր ժողովուրդի հաւաքական յիշողութենէն...»: Այլ տեղ, հաստատել էր «ազգի մը ինքնութեան ամուր կուռաններէն մէկը լեզու է», հարց կու տար. «Հայ կեանքէն ներս օտար լեզուի աճող ներկայութեան դիմաց, արդեօք հայ լեզուն պէ՞տք է նկատել ինքնութեան հական յատկանիշ, թէ՞ որպէս հաղորդակցութեան միջոց...»:

Վեհափառին ներածականէն մէջըրբումով վերի հաստատումները եւ իրենց մէջն իսկ պատասխանները պարփակող հարցադրումները մօտաւոր պատկերացումը կու տան սփիւռքի

ներկայ դժուար կացութեան, որու պայմաններու մէջ ի՞նչ միջոցներով հնարաւոր պիտի ըլլայ (պիտի ըլլա՞յ) մշակելու նորահաս սերունդին ազգային ինքնութիւնը: Ահա գերակայ խնդիրը եւ լրջագոյն մարտահրաւէրը:

3.- Խորհրդաժողովին կը մասնակցէին հինգ մտաւորականներ՝ Հայաստանէն, ինչպէս նաեւ՝ սփիւռքի նախարարը: Աւարտին, անոնցմէ մէկը քաղած տպաւորութիւնը յայտնեց դիպուկ արտայայտութեամբ մը, որուն միտք բանին մօտաւորապէս հետեւեալն էր. «Առաջին անգամն է, որ կը գտնուի սփիւռքի հարցեր քննարկող հաւաքի մը մէջ: Ես բոլորովին տարբեր ընկալում ունէի սփիւռքի մասին եւ ըստ այնմ նաեւ՝ ակնկալութիւններ: Կենթագրեմ, որ Հայաստանի մէջ իմ գործընկերներուս ընկալումն այլ իմինէս տարբեր պիտի չըլլայ: Այս խորհրդաժողովին ետք, սակայն, կը գիտակցիմ, որ իմ ընկալումէս տարբեր ու մեծ չափերու վրայ կը գերակշռեն սփիւռքի խնդիրները, տազնապիները, առաջնահերթութիւնները»:

Կը մտածեմ. որքա՞ն բարենպաստ պայմաններ կ'ունենայինք հայօճախներու մէջ, իթէ՞ անոնց ղեկավար տարրին գիտակցութեան մէջ տիրապետէր եւ առաջնորդող ուժ ըլլար առաջնահերթութեան ըմբռնումը:

4.- Թեկադրական է Արամ Ա. կաթողիկոսին ներածականը, որ սփիւռքեան խնդիրներուն համար լուծումներ որոնելու ճիգին մէջ կը յանձնարարէ հեռու մնալ «կացութիւնները վարդապոյն տեսնելու ուսման թիք հակումներէ» եւ՝ «ըլլալ իրատես, թէ՛կուզ՝ երբեմն յոռեսես...»:

Հայօճախներու (հայազգույններու) ղեկավար տարրին համար իբրեւ անյետաճգելի ու այժմէական եւ առաջնորդող մտածումներ՝ կ'արժէ, նոյնիսկ անհրաժեշտ է քննութեան առարկայ դարձնել վեհափառին ներածական խօսքը եւ անոր հիմամբ տեղական մակարդակի խորհրդաժողովներ կազմակերպել ու աշխատանքի յայտարարել մշակել:

ՄԻՀՐԱՆ ՔԻՒՐՏՈՂԼԵԱՆ

Հորիզոն
www.horizonweekly.ca

CONNECT WITH US:
 facebook.com/pages/Horizonweekly
 @horizonweekly

HAIG AFARIAN

Cell : 514.862-6779
 Bur : 514.360.3000 ext 1234
 haig.afarian@gmail.com

Charisma FINANCE

3310 100e Avenue, bureau 350, Laval
 Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Groupe Sutton - Performer Inc.
 123 Place Frontenac
 Pointe-Claire, QC H9R 4Z7

ALBERT ARKILIANIAN
 Courtier immobilier résidentiel
 Residential Real Estate Broker

aarkilianian@sutton.com
 Cell: 514.962.8822
 Bur: 514.426.9595
 Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends
 votre propriété gratuitement!*

NISSAN GABRIEL

VÉHICULES D'OCCASION
CERTIFIÉS

KEVORK ASADOURIAN
 Directeur des ventes - usagé
 Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4
 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc : 514 327-7967
 www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite
AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
 AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
 Financial Statements
 Bookkeeping
 Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
 Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
 Tel. (514) 963 3363
 2866 Rue De Chamonix
 Saint-Laurent, Québec
 H4R 3B7

Services available
 in Armenian, Arabic,
 English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
 CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
 Tel: 450.937.4064
 Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
 450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
 SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

ՀԱՅԿ ԿԱՐՊՈՒՆԵԱՆ
Hayk Hartounian
 Courtier immobilier résidentiel
 Residential Real Estate Broker

C 514.574.6162
 B 514.333.3000

NETTOYEUR
MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
 À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal
 Tél: 514.334.7830

«Հորիզոն»ի Հարցազրույցը Գանատայի մօտ ՀՀ ընթացաւարտ դեսպան Արմէն Եգանեանի հետ

Հ.- Յարգելի՛ պարոն Եգանեան, իր աւարտին հասաւ Գանատայում Ձեր դիւանագիտական ծառայութեան 6-ամեայ շրջանը, որ զուգարկայեց Գանատայի Համադաշնութեան 150-ամեակի հետ: Ինչո՞վ կ'արժեւորեմ Գանատան՝ որպէս պետութիւն:

Ա.Եգանեան.- Ինչպէս նշեցիք, 2011 թ. ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակուելով Գանատայում ՀՀ դեսպան՝ հնարաւորութիւն ունեցայ վեց տարիների ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետութիւնը մի այնպիսի առանձնատու կերպով, ինչպիսին է Գանատան: Դիւանագիտական ծառայութեանս ընթացքում ամէն կերպ ձգտել եմ առաւել սերտացնել յարաբերութիւնները Հայաստանի Հանրապետութեան եւ Գանատայի միջեւ երկկողմ համագործակցութեան բոլոր ուղղութիւններում: Վերջին վեց տարիների ընթացքում շօշափելի աճ է արձանագրուել Հայ-գանատական կապերի բոլոր բնագաւառներում:

Քաղաքական բնագաւառում վերոնշեալի լաւագոյն ապացոյցներից մէկը փոխադրութիւնների զգալի աքթիւացումն էր, ինչն իր բարձրակէտին թերեւս հասաւ 2015 թ., երբ պաշտօնական այցով Գանատայում եղաւ ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակեանի գլխավորած պատուիրակութիւնը: Քաղաքական ոլորտում՝ ՀՀ դեսպանութեան եւ Գանատայի տարբեր իրաւասու գերատեսչութիւնների միջեւ տիրանալով շփոթմանի շնորհիւ, երկկողմ յարաբերութիւնները հասցուել են զարգացման նոր մակարդակի: Դրա կարեւոր առհաստատեաներից էր նաեւ Հայաստանի եւ Գանատայի միջեւ հաստատուած աքթիւ համագործակցութիւնը Յրանգոֆոնիայի միջազգային կազմակերպութեան շրջանակներում: 2016 թ. Նոյեմբերի 27-ին Մատակասկարի մայրաքաղաք Անտանանարիւում կայացող ՖՄԿ նախարարական համաժողովի ընթացքում որոշուած է կայացուել 2018 թ. կայանալիք Յրանգոֆոնիայի գագաթաժողովն անցկացնել Երեւանում: Դրանում իր աքթիւ մասնակցութիւնն է ունեցել նաեւ Գանատայի կառավարութիւնը, ով իր երեք ձայներով (Դանային կառավարութեան, Քեպէզի եւ Նոր Բրանսվիքի) իրականացրած աշակցութիւն է ցուցաբերել այդ որոշմանը:

Ինչպէս իրաւամբ նշուած է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի՝ Գանատայի օրուայ կապակցութեամբ 2017 թ. Յուլիսի 1-ին վարչապետ Ճասթին Թրուտոյին ուղղուած շնորհակարարական ուղերձում. «Հայաստանի եւ Գանատայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումից ի վեր մեր երկրների համագործակցութիւնն էական առաջընթաց է գրանցել՝ հասնելով բարձր մակարդակի»:

Տնտեսական բնագաւառում նոյնպէս տիրամիջ զարգացում է արձանագրուել ի շնորհիւ, նախեւառաջ, ՀՀ-ում գործունէութիւն սկսած գանատական ընկերութիւնների: Համագործակցութեան ամենաաքթիւ ոլորտներն են դարձել հանքարդիւնաբերութիւնը եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտը: Դա զգալիօրէն նպաստել է նաեւ երկկողմ ներկրումների եւ արտահանումների թուեւ աճին, սակայն, ինչպէս բազմիցս նշել եմ, տնտեսական ոլորտում առկայ թուերը գոհացնող չեն, քանզի ներուժը շատ աւելի մեծ է:

Մշակութային բնագաւառի մասին խօսելիս՝ հարկ է նշել տեղի ունեցած հարիւրաւոր մշակութային միջոցառումների մասին, որոնց շնորհիւ ինչպէս գանատական հասարակութիւնում են սկսել շատ աւելի ընդգրկուել ճանաչել Հայ

մշակոյթն ու պատմութիւնը, այնպէս էլ հայերս ենք աւելի հաղորդակից դարձել մշակոյթի բնագաւառում գանատական ժառանգութեանը:

Հ.- Ձեր ծառայութեան ընթացքում ինչպէ՞ս դիմագրաւեցիք բուրբակաւ եւ ատրպէյնական հակահայ փարզչութիւնը:

Ա.Եգանեան.- Գանատայում դիւանագիտական ծառայութեանս առաջին իսկ օրուանից տարբեր մակարդակի հանդիպումների ընթացքում շեշտել եմ, որ իմ հիմնական առաքելութիւնը երկկողմ յարաբերութիւնների զարգացումն է: Միեւնույն ժամանակ, ամէն կերպ ցոյց եմ տուել, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ ժողովրդի դէմ ուղղուած որեւէ քայլ անպատասխան չի մնալու: Այդ պատասխանները յստակ տրուել են թէ՛ 2011 թ., երբ Թուրքիայի դեսպանութիւնը փորձում էր զրպարտող յօդուածներ միջոցով վարկաբեկել մեր երկիրը, թէ՛ 2012թ., երբ Ատրպէյճանի դեսպանութիւնը, շահարկելով այսպէս կոչուած Խոճալուի իրադարձութիւնները, փորձում էր հակահայ տրամադրութիւններ ստեղծել Գանատայի տարբեր քաղաքներում, եւ տրուած են մինչ այժմ՝ մինչ 2017 թ., երբ նոյն Թուրքիայի դեսպանութիւնը, դուրս գալով բարոյակալութեան բոլոր սահմաններից, ցանկանում էր Ապրիլի 24-ին Թուրքիայի մշակութային օրերին նուիրուած միջոցառումներ իրականացնել Օթթաուայում՝ ի նշանակումն Գանատայի Համադաշնութեան 150-ամեակի: Բոլոր այդ դէպքերում հակահայ ծրագրերը ձախողուել են, ինչը եւս մէկ անգամ ապացուցում է, որ Գանատան մարդու իրաւունքները յարգող եւ արդարութեան ջանակիր հանդիսացող պետութիւն է, ուր հնարաւոր չէ էժան զրպարտանքի միջոցով արդիւնքի հասնել:

Հ.- Գանատահայութիւնը, որպէս կայացած համայնք, Սփիւռքի ամենաբնիտասարդ համայնքներից է: Ձեր դիւանագիտական ծառայութեան ընթացքում խորապէս հաղորդակից դարձա՞ք գանատահայ համայնքի կեանքին: Ինչպէ՞ս կը գնահատեմ մեր համայնքը:

Ա.Եգանեան.- Գանատահայ համայնքն, իրօք, Սփիւռքում մեր ամենաաքթիւ համայնքներից է: Բազմիցս ասել եմ, որ Գանատայում առաջին իսկ օրուանիցս զարմացած եմ եղել մեր համայնքի հայխօսութեան բարձր մակարդակի վրայ: Բոլոր վեց տարիների ընթացքում դեսպանութիւնն աքթիւօրէն համագործակցել է համայնքի գրեթէ բոլոր կառոյցների եւ կազմակերպութիւնների հետ, փորձել ամէն կերպ ներգրաւել վերջիններիս երկկողմ յարաբերութիւնների տարբեր բնագաւառներում: Դիւանագիտական ծառայութեանս ընթացքում բազմիցս այցելել եմ գանատահայ գրեթէ բոլոր համայնքային կեդրոնները: Մասնաւորապէս Թորոնթօ քաղաք այցելել եմ 105 անգամ, իսկ Մոնթրէալ՝ 102: Տարատեսակ համայնքային միջոցառումների մասնակցելիս իմ հիմնական ուղերձը մեր համայնքի ներկայացուցիչներին ձեւակերպուած է եղել մէկ բառով՝ «միասնականութիւն»:

Հ.- Ձեր պաշտօնավարման աւարտին Գանատայի մայրաքաղաք Օթթաուայի արտում տեղադրուեց գանատահայ լուսանկարիչ Եուսուֆ Քարշի յուշարձանը, որի իրագործման մէջ

Ձեր դերակատարութիւնը որոշիչ նշանակութիւն ունեցաւ: Իրրեւ դիւանագիտական իրագործում՝ ի՞նչ նշանակութիւն ունի Քարշի յուշարձանի տեղադրումը:

Ա.Եգանեան.- Յունիսի 9-ին, երբ Օթթաուայում բացուեց Եուսուֆ Քարշի յուշարձանը, կայացած ընդունելութեան ժամանակ նշել եմ, որ դրա առկայութիւնը մշտապէս հանդիսանալու է Հայ-գանատական բարեկամական յարաբերութիւնների ամենագեղեցիկ խորհրդանշաններից մէկը: Յատկապէս յատկանշական է յուշարձանի բացումը Համադաշնութեան պուրակում հենց այն տարում, երբ նշուած է Գանատայի Համադաշնութեան 150-ամեակը եւ Հայ-գանատական դիւանագիտական յարաբերութիւնների 25-ամեակը: Գաղափարը ծնուել է կոնցէպտի Մարիայի մօտ, երբ դեռեւս 2012 թ. Օթթաուայում հանդիպում ունեցանք Քարշի այրու՝ էստրելիտ Քարշի հետ: Քանի որ նաեւ Օթթաուայում չկար հայկական մշակոյթին նուիրուած որեւէ կոթող, Քարշի յուշարձանի բացումն, իրօք, երկկողմ յարաբերութիւնների առանցքային ձեռնարկներից կարելի է համարել:

Հ.- Մինչ Գանատայում դեսպան նշանակուելը դիւանագիտական գործունէութիւն է՞ իրականացրել ՌԳ-ում եւ ԱՄՆ-ում: Գանատան ինչո՞վ էր առանձնանում մեր յատկապէս ինչո՞վ կը կարեւորեմ տուեալ երկրում կատարած աշխատանքը:

Ա.Եգանեան.- Դիւանագիտական ծառայութեան մէջ իւրաքանչիւր երկիր իր առանձնատուութիւններն ունի: Գանատայում աշխատածս տարիները



մշտապէս կը յիշեմ ջերմութեամբ՝ կապուած, առաջին հերթին, գանատացիների դրական կերպարով, առաձնայատուկ բարութեամբ եւ հիւրընկալութեամբ: Գանատայում դիւանագիտական ծառայութեանս ամէն օրը փորձել եմ ծառայեցնել Հայաստանի եւ Հայ ժողովրդի մասին աւելի պատկերաւոր կերպար ստեղծելու եւ եղած պատկերացումները խորացնելու: Վստահաբար կարող եմ նշել, որ Հայ եւ գանատացի ժողովուրդներն ընդհանուր շատ գծեր ունեն, որոնցից ամենաշատն աչքի ընկնողը, ինչպէս արդէն նշեցի, ջերմ հիւրընկալութիւնն է:

Շնորհակալութիւն, պարո՛ն Եկանեան, հարցազրույցի համար: Գանատահայութիւնը իր խորին երախտագիտութիւնը է յայտնում Ձեզ՝ վստահ լինելով, որ Ձեր անունն ու աւանդը փորագրուելու է հայ դիւանագիտութեան պատմութեան հատորներում: «ՀՈՐԻԶՈՆ»

«Անահիտ» երաժշտանոցի ամառային համերգը



Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, 15 Յունիս 2017-ին տեղի ունեցաւ «Անահիտ» երաժշտանոցի տարեկան համերգը, Հայ եղբայրական եկեղեցւոյ մէջ:

Ներկաներու ուրախ տրամադրութեամբ սկսաւ համերգը:

Շարունակաբար, երգերով ու նուագներով ելոյթ ունեցան հետեւեալ աշակերտները. Արջուն Զինտալ, Գամիլլա Գանտահարեան, Ճուլեան Լի, Գարինա Գանտահարեան, Արեգ Մուրատեան, Արի Մուրատեան, Լորենա Հորանի, Դաւիթ Պոյաճեան, Մարիամ Պոյաճեան, Մարիա Նաչատուրեան, Իթան Ճէնկ եւ Իգապել Լի:


Բոլոր կատարումները հաճելի եւ սրտայոյզ էին:

Համերգի աւարտին, ըստ սովորութեան, Անահիտ Կուսուցեան ներկաներուն նուիրեց իր յորինած երգերէն մէկը՝ «The Life» Jorge Elmiro-ի խօսքերով եւ «Ամպից կորաւ լուսնկան» իր իսկ նուագակցութեամբ դաշնակի վրայ:

Համերգը աւարտեցաւ բուն ծափահարութեամբ եւ ներկաներու ուրախ տրամադրութեամբ:

Անահիտ Կուսուցեան իր հմայքով եւ տքնաջան աշխատանքով տարիներէ ի վեր կը ձգտի եւ կ'աշխատի մեր պատանիներուն փոխանցել դարերու սիրանքներէն եւ եղեւնի ճանապարհէն մեզի հասած հայ երգը:

Բժիշկ Կարպիս Հարպոյեանի «Բժիշկին խօսքը» Գ. Եւ Դ. Հատորներու շնորհահանդէս



Կիրակի, 6 Օգոստոս 2017-ին, Թեմիս բարեջան առաջնորդ Բարբէն Արք. Չարեան նախագահեց եւ քարոզեց Ս. եւ Անմահ Պատարագին Լաւալի Ս. Գէորգ եկեղեցւոյ կից՝ Bon Pasteur եկեղեցւոյ մէջ:

Պատարագէն ետք, Բարբէն Արքեպիսկոպոս ներկայ գտնուեցաւ Բժիշկ Կարպիս Հարպոյեանի «Բժիշկին խօսքը» բրորդ եւ չորրորդ գիրքերու շնորհահանդէսին: Երկու հատորներուն ներկայացումը կատարեց Պրն. Համբիկ Գարայեան: Շնորհահանդէսի աւարտին, Սրբազան Հայրը խօսք անելով գնահատեց Պրն. Գարայեանը գիրքերը ամբողջական կերպով ներկայացնելուն համար եւ շնորհաւորեց Բժիշկ Հարպոյեանին:

Գալով Բժիշկ Հարպոյեանի «Բժիշկին խօսքը» գիրքերու շարքին, «Բժիշկին Ա. խօսքը» հրատարակուած է 2000 թուականին: Ապա 2011-ին հրատարակուած է իր երկրորդ աշխատասիրութիւնը՝ «Բժիշկին Բ. խօսքը», ապա «Բժիշկին Գ. խօսքը» 2015-ին եւ «Բժիշկին Դ. խօսքը»:

«Բժիշկին խօսքը» շարքին կողքին, Բժ. Հարպոյեանի գրական գործերէն հարկ է յիշել Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առթիւ 2015-ին հրատարակուած «Խաչելութեան ծանապարհ» եւ «Խաչելութենէն Յարութիւն» հատորները:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան 2009-ին պարգևատրուած է «Համազգային»-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ «Համազգայինի Շքանշան»-ով՝ երկար տարիներ անսակարկ նուիրումով հայ հասարակական կեանքի եւ յատկապէս Համազգայինի ծիրէն ներս տարած աշխատանքներուն համար:

Ան պարգևատրուած է նաեւ Գանատայի Հայոց Ազգային Առաջնորդարանի «ՅՈՎՀԱՆ ՄԱՆ ԴԱԿՈՒՆԻ» Ազգային եկեղեցական ծառայութեանց շքանշանով 27 սեպտեմբեր 2015-ին:

ADVERTISE YOUR BUSINESS HERE

ԹՈՐՈՆԹՅԻ ՄԷՋ «ՅՈՐԻՉՈՆ»Ի ՁԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՅԷՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ

CALL JACK VARBEDIAN
(416) 722-9225



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱՒՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677



Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեւորագուած կայքէջը / Visit our new website
www.arsarmenianschool.ca



ՀՕՍ-ի Սոնթրալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն

ՀՕՍ-ի Սոնթրալի Ընկերային ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Սոնթրալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունեութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն:

- Կ'օգնէք դիրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը:

- Կ'ամբողջացնէք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants:

- Նորեկները կ'արձանագրէք ֆրանսերէնի դասընթացներու:

- Կ'ընկերակցիք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտէք աշխատանք գտնելու կապակցութեամբ:

- Նոր ժամանած եւ տակաւին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրէք խոհանոցային իրեր:

- La Corbeille զանազան բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ զեղչուած գիներով ուտեստեղէն կ'ապահովէք կարիքաւոր ընտանիքներուն:

Չորեքշաբթի օրերը ժամը 12:00էն - 4:00

Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5

Հեռաձայն՝ 514 514-335-2222

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ԴԵԲԵՐԵՃԵԱՆ

Achat	Ստեւոր	Purchase
Hypothèque	Սեշտի Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

«Սասուն» ամառնային ճամբարի աւարտահանդէսը Վանգուվերի մէջ

24 Յուլիս 2017-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Պրընըպիի Micheal J. FOX թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Վանգուվերի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ Հայ կեդրոնի կազմակերպած «Սասուն» ամառնային ճամբարի աւարտահանդէսը: Ներկայ էին Գանատայի առաջնորդ Գերաշնորհ Տէր Բաբգէն Սրբազան Արք. Չարեանը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ Հայր Հրանդ Վարդապետ Թահանեանը, Ս. Վարդան Հայց. Առաքելական եկեղեցւոյ Էպիսկոպոս Տէր Գեղարդ Ա. Քէն. Կարապետեանը, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ ընկեր Վահէ Անտոնեանը, Հոգաբարձութեան անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ եւ ծնողներ:

Հայկական մշակոյթին նուիրուած «Սասուն» ամառնային ճամբարի աւարտահանդէսը մեր գաղութին ներկայացուց վանգուվերահայ նոր սերունդին շնորհալի տաղանդներէն հոյ մը, առիթ ընծայելով հայկական մշակոյթով արբենալու, ինչպէս նաեւ բոլորիս յիշեցնելով որ Հայապահպանման մեր դժուարին պայքարին ամենէն ազդեցիկ գէնքերէն են հայկական մշակոյթի գոհարներուն պահպանումն ու անոնց սերունդէ սերունդ փոխանցումը. ահա այս սուրբ նպատակին ու գաղափարին իրագործումը վերածուել է նուիրելի առաքելութեան, որուն ձեռնամուխ եղած է «Սասուն» ամառնային ճամբարի յանձնախումբը:

16 պատանիներով սկսած «Սասուն» ճամբարը այսօր մտաւորապէս 90 հոգի կը հաշուէ՝ 5-20 տարեկան: 2008-էն ի վեր, Թորոնթոյէն հրաւիրուած հմուտ ու փորձառու, Համազգայինի «Երեւոնի» պարախումբի պարուստյց Լոռի Նաճառեանը կը ղեկավարէ «Սասուն» պարախումբը, այս տարի օգնականներ ունենալով Արթիւր Գրիգորեանն ու Լիա Տէրտէրեանը:

Ճամբարին ընթացքին աշակերտներուն կը դասաւանդեն բազմամեայ աշխատանքային փորձ, մանկավարժական հմտութիւններ եւ կարողութիւններ ունեցող ուսուցիչներ, որոնք կը տիրապետեն ուսուցման նոր ոճերու եւ

հնարքներու:

«Սասուն» ամառնային ճամբարը զարկ կու տայ ոչ միայն աւանդելու հայկական պարեր, այլ նաեւ հայ երգն ու երաժշտութիւնը՝ ղեկավարութեամբ Թորոնթոյի ՀՕՄ-ի վարժարանի ուսուցչուհի տիկին Թալին Արթիւնեան Քէլէպօզեանի, որ բժանդորէն երգ կը սորվեցնէ հայ պատանիներուն:

Ճամբարի առօրեան բաւականին աշխոյժ էր. կը սկսէր աղօթքով՝ Հայր Հրանդի առաջնորդութեամբ: Պարի դասերուն նաեւ զուգահեռ կ'ընթանային հայ երգի ու երաժշտութեան պահերը, ձեռնարկ աշխատանքները, հայոց պատմութեան եւ կրօնի դասերը:

Այս տարի մասնակցողները այցելեցին ազաւակ՝ պտղաբաղի, ունեցան ցուցադրութիւն Canadian Plintarium-ի կողմէ եւ աւանդական դարձած ջրախաղը: Նաեւ «Սասուն» ճամբարը իր ամբողջ աճնակազմով այցելեց Վանգուվերի Հայոց ցեղասպանութեան յուշարձանը:

Այս տարի յատկանշական էր Հայաստանի Հանրապետութեան անզուգական արուեստագէտ Արմէն Մարտիրոսեանի այցելութիւնը, որ դասաւարտեց «Հայկական լարային գործիքներ»ուն մասին, Միքայէլ Շատարեանը դասաւարտեց եւ դասաւանդեց «ճատրակի արուեստը», Լեւոն Սարգիսեանը դասաւարտեց «Հայկական գորգերն ու անոնց ծագումը», ինչպէս նաեւ «Թորոնթոհայ» խմբագիր Կարին Սաղտըճեանը ներկայացուց «Լրագրութիւն» նիւթը «Արագած» եւ «Արարատ» խումբերուն: Ան աշխատանոցներու միջոցով նոյն խումբերուն հետ պատրաստեց եւ խմբագրեց «Սասուն» ճամբարի առաջին լրատուն, որ աւարտական ելոյթին ընթացքին տրամադրուեցաւ ներկաներուն:

Աւարտահանդէսին յատկապէս սկսաւ Հայաստանի եւ Գանատայի քայլերգներու երգեցողութեամբ:

Բացումը կատարուեցաւ Նանոր Մինասեանի (հայերէն) եւ Լարա Թէրզեանի (անգլերէն) հակիրճ խօսքերով, որոնք բարի գալուստ մաղթեցին ներկաներուն եւ բնութագրեցին ճամբարին գործունէութիւնը. այս տարի ճամբարը



ամբողջութեամբ նուիրուած էր հայոց դիւցազն Սասունցի Դաւիթին, որ ներկայացուցաւ Տէյլիտին պատմութեամբ, երբ ան «Սասուն» ճամբարէն տուն կը վերադառնայ եւ կը յայտնէ, թէ չ'ուզեր այլեւս ետ երթալ: Մեծ հայրը կը փորձէ խրախուսել զինք՝ յիշեցնելով իր նախնիներուն ոգին եւ իր անունին պատմութիւնը: Ան կը պատմէ Սասունցի Դաւիթին պատմութիւնը, որ բեմին վրայ կամաց-կամաց կեանքի կը կոչուի: Աւարտին Տէյլիտ կ'որոշէ վերադառնալ «Սասուն» ճամբար:

Ելոյթին ընթացքին ցուցադրուեցաւ տեսահոլովակ մը, որ կը դրուատէր «Սասուն» ամառնային ճամբարին գործունէութիւնը:

Յայտագիրին աւարտին, «Սասուն» պարախումբը սրահը թնդացուց «Իմ Հայաստան» երգով:

«Սասուն» ամառնային ճամբարին իր ունեցած տասնամեայ գործունէութեան առիթով յատուկ յուշանուէրով զնահատուեցաւ պարուստյց օրդ. Լոռի Նաճառեանը:

Հանդիսութեան աւարտին Հայր Հրանդ Վարդապետ Թահանեան իր

զնահատական խօսքը ուղղեց բոլոր ներկաներուն եւ ճամբարի աշակերտներուն:

Հանդէսին ներկայ թեմիս առաջնորդ Գերաշնորհ Տէր Բաբգէն Սրբազան Արքեպիսկոպոս Չարեան բարձր զնահատեց «Սասուն» ճամբարի նիւթապէս եւ բարոյապէս սատարող բոլոր անհատները եւ իր հայրական օրհնութիւնը բաշխեց յանձնախումբին, մասնակցողներուն, ծնողներուն եւ ներկաներուն: Ան իր խօսքերուն մէջ ըսաւ. «Մենք Հայաստանն ենք, Մենք Արցախն ենք, «Սասուն» պարախումբը պէտք է շարունակէ պարել, մինչեւ որ օր մը պարէ մեր ազատագրուած հողերուն վրայ»: Ապա Հայր Հրանդ Թահանեանի «Սասուն» ամառնային ճամբարին ունեցած հնգամեայ ներդրումին համար, Սրբազան Հայրը զնահատեց զինք յատուկ յուշանուէրով մը:

Հանդէսը վերջ գտաւ «Պահպանիչ»ով:

Հանդիսութեան յաջորդեց սուրճի եւ անուշեղէնի սպասարկութիւն:

Մտրիկ Սիլվանեան Չափանեան Նկար՝ Ռաֆֆի Չափանեանի

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցեք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոյով երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

Bakery and Fine Foods

OPEN 7 DAYS A WEEK!
WEDNESDAY: 7:00 - 7:00
SATURDAY: 8:00 - 8:00
SUNDAY: 8:00 - 5:00

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedian@hotmail.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Bozell** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : 416.449.2040
Fax: 416.449.2048

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Հայ Ժողովուրդը Իր Անկախ Պետականութենէն Կը Սպասէ Պահանջատէր Կանգնիլ Սեւրի Դաշնագիրի Իրագործման

Օգոստոս ամսու 10րդ օրը, 93 տարի առաջ, ֆրանսական Սեւր քաղաքին մէջ, պետական հանդիսաւոր շուքով ստորագրուեցաւ միջազգային դաշնագիր մը, որ նուիրագործեց Հայաստանի անկախութեան եւ ազգային պետականութեան՝ Հայաստանի Հանրապետութեան միջազգային իրաւական ճանաչումը:

Սեւրի դաշնագիրը նաեւ եղաւ միջազգային օրէնքի եւ իրաւունքի այն միակ (եւ այդ բաժնով ցարդ չփոխարինուած) փաստաթուղթը, ուր մանրամասնօրէն ճշգրտուած ու քարտէսագրուած են հայկական եւ թրքական պետութեանց միջեւ միջազգային սահմանները՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու ատենի նախագահ Վուտրո Ուիլսոնի իրաւարարութեամբ:

Սեւրի դաշնագիրը մէկն էր Առաջին Աշխարհամարտին աւարտը իրաւականօրէն հաստատագրող այն դաշնագիրներէն, որոնք պատերազմի յաղթական Դաշնակից Ուժերուն կողմէ պարտադրուեցան պարտեալ Կեդրոնի Ուժերուն՝ Գերմանիոյ, Աւստրո-Հունգարիոյ, Պուլկարիոյ եւ Օսմանեան կայսրութեան: Սեւրի Դաշնագիրը հանդիսացաւ պարտեալ Օսմանեան կայսրութեան եւ յաղթական Դաշնակիցներուն միջեւ կնքուած խաղաղութեան ու հաշտութեան պայմանագիրը:

Դաշնագրի ստորագրութեան պաշտօնական ու հանդիսաշուք արարողութիւնը կատարուեցաւ Սեւրի աշխարհահռչակ Փորսլէնի գործարանի ցուցասրահներէն մէկուն մէջ: Ֆրանսա նախագահեց արարողութեան: Դաշնագիրը պատրաստուեցաւ երեք լեզուներով՝ ֆրանսերէն (առաջնային), անգլերէն ու իտալերէն եւ ստորագրուեցաւ, լատինական այբուբենի կարգով, Հայաստանի, Պելճիքայի, Ֆրանսայի, Յունաստանի, Հիւսիսային (արաբական թագաւորութիւն), Իտալիոյ, Ճափոնի, Լեհաստանի, Փորթուկալի, Ռումանիոյ, Միացեալ Թագաւորութեան, Եւրոպայի եւ Օսմանեան կայսրութեան կողմէ:

Յանուն Հայաստանի՝ Սեւրի դաշնագիրը ստորագրեց Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեան: Իսկ Օսմանեան կայսրութեան անունով Դաշնագիրը ստորագրեցին թրքական պատուիրակութեան չորս անդամները՝ Ռիզա Թեֆէք, Մեծ վեզիր Տամաթ Ֆերիտ փաշա, դեսպան Հատի փաշա եւ կրթութեան նախարար Ռեշիտ Հալիս, որոնք լիազօրուած էին սուլթան Մեհմետ Երրորդի կողմէ:


Քաղաքական եւ իրաւական բարդ ու անօրինակ ճակատագիր մը վերապահուեցաւ Սեւրի դաշնագրին: Միջազգային դաշնագիրներու պատմութեան մէջ եղաւ մէկը այն եզակի իրաւական փաստաթուղթերէն, որոնք ո՛չ վաւերացուեցան կամ լիարժէք կիրարկուեցան, ոչ ալ ամբողջապէս չեղեալ կամ ջնջուած յայտարարուեցան:

Սեւրի դաշնագրով փաստօրէն անդամահատուեցաւ Օսմանեան կայսրութիւնը եւ յաղթական Դաշնակիցները իրենց միջեւ բաժնեցին պատերազմական աւարտը: Միջին Արեւելքի, կայսրութեան արեւմտեան բաժնի, Պալէստինայի եւ հիւսիսային Աֆրիկայի տարածքին՝ Ֆրանսա, Անգլիա եւ Իտալիա, ինչպէս նաեւ կրտսեր դաշնակիցի դիրքէն Յունաստան, իրենց հոգատարութիւնը հաստատեցին օսմանեան լուծէն ազատագրուած տարածքներու, երկիրներու եւ ժողովուրդներու վրայ: Այդ առումով եւ իր համապատասխան յօդուածներով ու բաժնիներով՝ Սեւրի դաշնագիրը փաստօրէն ոչ միայն վաւերացման հարց չունեցաւ, այլեւ՝ ի գործ դրուեցաւ... բան մըն ալ աւելիով:

Նոյնը կարելի չէ ըսել, դժբախտաբար, Հայաստանի Հանրապետութեան առընչուող բաժնին կամ յօդուածներուն վերաբերեալ: Յաղթական Դաշնակիցները այնքան բուռն մրցակցութեան եւ տարակարծութեանց մէջ էին՝ Օսմանեան կայսրութեան աւարտը իրենց միջեւ բաժնելու հարցով, որ պէտք եղաւ բանակցիլ շուքը երկու տարի՝ Առաջին Աշխարհամարտի իրողական աւարտէն (1918ի աշուն) մինչեւ 1920ի Օգոստոս 10, որպէսզի ի վերջոյ պաշտօնապէս ստորագրուի Սեւրի դաշնագիրը, իրաւական նուիրագործումը կատարելու համար Դաշնակիցներու միջեւ համաձայնութեանց:

Դաշնակիցներու այդ ներքին մրցակցութենէն առաւելագոյն չափով օգտուեցաւ թրքական նոր-ազգայնական շարժումը՝ Մուսթաֆա Քեմալի ղեկավարութեամբ: Քեմալ խորհրդային նորահաստատ իշխանութեանց հետ առանձին, երկկողմանի համաձայնութիւններ կնքեց, բացառապէս թէ գաղտնի, որպէսզի կարենայ ոչ միայն մերժել Սեւրի դաշնագիրը, այլեւ՝ 1920ի Հոկտեմբերին ընդհանուր յարձակողականի ձեռնարկել Հայաստանի ուղղութեամբ:

Քեմալական շարժման դիրքերուն ամրապնդումը եւ Հայաստանի Հանրապետութեան տկարացումը (Լեւինի-Քեմալ մեղսակից ճնշման տակ) պատճառ դարձան, որ քաղաքական խամաճիկի վերածուած սուլթան Մեհմետ Երրորդ կառավարութիւնը նոյնիսկ խորհրդարան



չյղէ Սեւրի դաշնագիրը առ ի վաւերացում:

Եւ այսօրինակ զարգացումներու յորձանուտին մէջ Սեւրի դաշնագիրը պարզապէս «մոռցուեցաւ»: Ոչ վաւերացուեցաւ, ոչ ալ անվաւեր հռչակուեցաւ, այլ ենթարկուեցաւ ուժի եւ ուժեղի տրամաբանութեան՝ իր որոշ մասերով ու յօդուածներով գործադրուելով, իսկ այլ յօդուածներով քաղաքական շրջանառութենէ դուրս մղուելով:

Այդ առումով ալ Դաշնակիցները նոր դաշնագիր մը պատրաստեցին՝ Առաջին Աշխարհամարտի արեւելեան ճակատի պատերազմական դրութեան վերջնականապէս վերջ տալու նպատակով: Այդ նոր դաշնագիրը եղաւ 1923ի Յուլիս 24ին ստորագրուած Լօզանի դաշնագիրը, որ սակայն կնքուեցաւ ոչ թէ Օսմանեան կայսրութեան կառավարութեան, այլ՝ Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին հետ, որ Քեմալի ազգայնական շարժման ինքնակոչ իրաւական անուանումն էր: Հանրապետական Թուրքիան դեռ գոյութիւն չունէր իբրեւ իրաւական անձնաւորութիւն, պիտի հռչակուէր 1923ի Հոկտեմբերի 29ին:

Բայց ինչպէս որ հազարամեակներով պատահած ու կրկնուած է, իրաւունքն ու օրէնքը միշտ ալ խոնարհած են սուրին եւ ուժեղին առջեւ՝ այս վերջիններու պահանջներուն եւ կամքին հետ քայլ պահելու անթաքոյց ճիգով ու՝ հաճոյակատարութեամբ:

Նոյնը պատահեցաւ Քեմալի հետ կնքուած Լօզանի դաշնագրին պարագային, որ Սեւրի դաշնագիրը իրաւականօրէն չեղեալ յայտարարելու կամ փոխարինելու հարկադրանքը չըջանցեց՝ Քեմալի Թուրքիան սիրահանելու եւ խորհրդային ժողովուրդին հեռացնելու, ետ շերտելու եւ Եւրոպային մօտեցնելու փորձով: Բայց այդ շրջանցման գինը եղաւ Քեմալական Թուրքիոյ ճանաչումը՝ իբրեւ Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդը, ինչ որ բնականաբար կը նշանակէ նաեւ ժառանգումը Հայաստանի եւ հայ ժողովուրդի նկատմամբ թրքական պետութեան բոլոր պարտաւորութեանց:

Այսպէ՛ս, պարզապէս մոռացութեան մատնելով Սեւրի դաշնագիրը՝ մեծապետական աշխարհը ղեկավարող ուժերը փաստօրէն պատմութեան առջեւ բաց պահեցին Սեւրի դաշնագրին... վերակենդանացման հնարաւորութիւնը:

Փաստօրէն Սեւրի դաշնագրէն դատ չկայ հայեթհայտական միջպետական յարաբերութիւններու եւ սահմաններու կարգաւորման միջազգային այլ դաշնագիր մը, որուն տակ կ'երեւի ստորագրութիւնը Հայաստանի Հանրապետութեան:

Հայ ժողովուրդէն առաջ եւ աշխարհի մեծ ու փոքր բոլոր ուժերէն անգին՝ յատկապէս թրքական պետութիւնն է, որ առաւելագոյն մտահոգութեամբ կը գիտակցի այս իրողութեան: Այդ պատճառով ալ ոչ մէկ ճիգ կը խնայէ, որպէսզի խորհրդային ճնշման տակ կնքուած 23 Հոկտեմբեր 1921ի Կարսի դաշնագրին նմանողութեամբ միջազգային նոր դաշնագիր մը կնքելու անձնատուութեան մղէ մերօրեայ Հայաստանի Հանրապետութիւնը: Ի վերջոյ Թուրքիա ամէնէն աւելի կ'անդրադառնայ, որ Սեւրի դաշնագիրը մոռցուած ըլլալ թէ անվաւեր մնացած իր գլխուն կախուած է դամոկլեան սուրբի պէս՝ Ուիլսոնեան սահմանագծումով Հայաստանի Հանրապետութեան միջազգային ճանաչումը իրաւականօրէն ամրագրելով:

Եւ Իսմէթ Ինչօնլու կոչուի թէ Ռէչեփ Էրտողան՝ թրքական պետութեան ղեկին կանգնած քաղաքական պատասխանատուն կը գիտակցի, որ ի վերջոյ կրնայ

հաշուետուութեան կանչուիլ, եթէ չկարենայ միջազգային նոր դաշնագրի մը կնքումով Հայաստանն ու հայութիւնը զրկել միջազգային օրէնքով եւ իրաւունքով հաստատագրուած Սեւրի Պարտամուրհակէն:

Այս առումով թուրք պետական ղեկավարութիւնը հետեւողական աշխատանքի մէջ է, որպէսզի 1920ականներուն չյաջողածը կարենայ ձեռք ձգել 21րդ դարուն:

Թրքական պետութեան ցեղասպան ղեկավարութեան ժառանգորդները հանգիստ պիտի չունենան այնքան ատեն, որ ձեռք ձգած չեն անկախ Հայաստանի Հանրապետութեան հետ Թուրքիոյ միջպետական սահմանագծի ճշգրտման իրաւական, այլեւ միջազգային ճանաչումի արժանացած այն նոր փաստաթուղթը, որ ի վերջոյ պիտի փոխարինէ Սեւրի դաշնագիրը:

Այո՛, թէեւ Սեւրի դաշնագիրը չվաւերացուեցաւ, բայց նաեւ՝ Հայաստանի վերաբերեալ իր յօդուածներով՝ չփոխարինուեցաւ որեւէ այլ դաշնագրով: Կարսի դաշնագիրը բնաւ չունեցաւ միջազգային իրաւականութիւն: Իսկ Լօզանի դաշնագիրը պարզապէս ուրացաւ, որ մեծապետական աշխարհը՝ միջազգային օրէնքի եւ իրաւունքի առումով՝ պարտք է Հայաստանին ու հայ ժողովուրդին:

10 Օգոստոսին, 93 տարի առաջ, Հայաստանն ու հայութիւնը տիրացան միջազգային օրէնքի եւ իրաւունքի իրենց յաղթանակով:

Մեր սերունդներուն կը մնայ մոռացման եւ ուրացման փոշիներէն հանել ու վերստին կեանքի կոչել Սեւրի դաշնագիրը:

Մանաւանդ՝ բոլոր ուժերով թուրք կանգնիլ Սեւրի Պարտամուրհակը հայ ժողովուրդի եւ Հայաստանի Հանրապետութեան ձեռքէն խլելու թրքական պետութեան մերօրեայ սաղրանքներուն:

Ի վերջոյ մեր սերունդը վկան է թրքական պետութեան նախաձեռնած վերջին սաղրանքին, որ 2009ին ստորագրուած Հայեթհայտ Արձանագրութեանց քաղաքական ծուղակը եղաւ: Թրքական պետութիւնը յաջողեցաւ Հայաստանի պետական ստորագրութիւնը ապահովել միջազգային համաձայնագրի մը տակ, որ թէեւ տակաւին չէ վաւերացուած, բայց նաեւ չէ ջնջուած ու միջազգային օրակարգի վրայ կը պահէ Սեւրի դաշնագիրը փոխարինուած տեսնելու թուրք պետական քաղաքականութիւնը:

Ինչպէս որ տիրահռչակ Փորթոքոլի ստորագրութեան առիթով Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմէտ Տաւութօղլու յայտարարած էր իր երկրի խորհրդարանին առջեւ՝ թրքական պետութեան հին թէ՛ նոր իշխանութիւնները կառչած կը մնան այն պնդումին, թէ՛

«Կարսի եւ Մոսկուայի համաձայնագիրները Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանները ճշգրտելու եւ արձանագրութիւններուն մէջ այս համաձայնագիրներուն ակնարկութիւններ կան: Ուրեմն, Հայաստան եւս կ'ընդունի, որ օրինական հիմք չունին այն պնդումները, թէ Հայաստան եւ Թուրքիա սահմանները շուք տարակարծութիւն ունին, կամ՝ թէ Հայաստան հողային պահանջ ունի Թուրքիայէն»:

Ժամանակն է այլեւս յետս կոչելու Հայաստանի պետական ստորագրութիւնը տիրահռչակ Արձանագրութիւններէն եւ Սեւրի դաշնագրին իրաւատէր կանգնելու պաշտօնապէս՝ քաղաքականօրէն եւ ամենայն դիւանագիտութեամբ:

ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



www.aniristorante.ca

*Fine Dining
Catering
Party Room*
FOR ALL YOUR EVENTS

Armenian Community Centre of Cambridge Presents

**ԽԱԶՎԵՐԱՑԻ ԱՄՈՒՍԱ-ԼԵՐԱՆ
ՔԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ**

**Armenian Heritage
Celebration**



**Elie Berberian
& His Band**

9

&

10

Սեպտ. / Sept.



ARZMISKEY



Saturday September 9th, 2017 | Price: \$25

| Kids 5-10 Years Old - Price: 10\$

- Շարձաք Մատաղորիենեք ժամը 6-ին
- Խրախճանք ժամը 8-ին

Sunday September 10, 2017 | FREE Entrance

- Կիրակի Պատարագ ժամը 11-ին
- Քերիսալի Օրինություն ժամը 1-ին

**Հաճելի Մթնոլորտ, Աանդական Տաուլ Հուրնա,
Համադամ Ճաշեր, Փոքրերու Խաղավայր**

For Hotel Reservations Call:

Cambridge Hotel | 700 Hespeler Rd. | Cambridge, ON | (519) 622-1605 | Discount code: ACC

www.armenianccofcambridge.org

15 International Village Dr., Cambridge



HOMENETMEN GAMK'S 16th ANNUAL GOLF TOURNAMENT

SUNDAY, SEPTEMBER 10, 2017

Club de Golf Ste-Rose

1400 Boulevard Mattawa, Laval, QC H7P 5W7 • 450-628-6072

\$125/player
Includes brunch, green fees, cart and BBQ

Registration & brunch
10 am - 12 pm
Shotgun start 12:30 pm

RESERVE NOW!

Aaron Belcher 514-979-7126 - Mano Keusseyan 514-502-7388
Homenetmengolf@gmail.com



ARMENIAN HERITAGE CRUISE®

JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!

• St. Kitts • Antigua • Puerto Rico • Labadee

You may book with the deposit in order to attend our private reception party!

HAROUT PAMBOUKJIAN

SIBIL

AKH'TAMAR DANCE ENSEMBLE



INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574
SUITES available upon request	

ALL RATES include taxes, port charges
This cruise is a 27th Anniversary celebration of the Armenian diaspora in North America. It is a special occasion and we are pleased to have you join us for this special event. All 2017 Armenian Heritage Cruise participants will receive a special gift.



For Reservations Contact:
Local 561-447-0750 • Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102
125 SE Mizner Blvd., Suite 14, Boca Raton, FL 33432
AHC@travelgroupintl.com
Call Arpi Ashkarian (Canada) (519) 749-2672



Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

À partir de **995\$** (par semaine)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1 1/2 à 4 1/2

Gicleurs automatiques
dans chaque appartement



Մեկ հոս ուրախ եկ
Պոն. Իբելեան

Պատրաստ եմք Կ'ուրե՛նք
մեր ՀԱՆՁՆԱՆԵԱՆ ՏՈՒՆԷՆ ԵՆՐԱ:



12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com



Noor Fine Food

Gourmet Mediterranean Cuisine

Ձեր ճաշատեսակներու Հայկական եւ Միջին Արևելեան պահանջներուն համար դիմեցե՛ք «Նոր Ֆայն ֆուտ» հաստատութեան, որ միշտ պատրաստ է, ձեր սպասարարները (Քլայթ.րինկ) ճիշտ ժամանակին հասցնել ձեր հասցէներուն:

Թորոնթոյի հասցէն,-
 1 High Meadow Place, Unit 9
 Toronto, Ontario M9L 2Z5
Tel 416 745 3111
Fax 416 745 9337
 by Samadi Iraqi Group
 @ www.instagram.com/noorfinefood



«Նոր Ֆայն ֆուտ» հաստատութիւնը մասնագիտացած է նաև տեսակաւոր խորովածներու (քլայպ) պատրաստութեան միջեւ իսկ բնան գառնուկ եփուած եւ անոր յարակից ուտելիքներով: Հղիներ որ գառնուկները ծնած եւ մեծցած են Օնթարիո մէջ:
 Հաստատութիւնը պատրաստ է նաև մկրտութիւններու, կշանտքներու, հարսելիքներու եւ այլ խրախճանքներու ու հոտարոյթներու ձեր նախասիրած ուտելիքներ մատակարարելու:



«Նոր Ֆայն ֆուտ» հաստատութիւնը մօտ օրէն «BABYLON» ճաշարանը պիտի բանայ Հայաստանի մէջ:





Ghadir

Meat & Restaurant

Մեր յարգալից յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHA DIR մտափաճառատու են ու ճաշարանի փոխադրուած 1, առկի բնդարձակ և յարմարաւէտ կեդրոն մը՝ նորագոյն եւ լաւագոյն ձևով ծառայելու մեր յաճախորդներու ե:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արևելեան գանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մենէիշ, պանիրով պեթրէկ, հաւու եւ կովու միսով շաւրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոթ, չի բօֆթ, լման հաւու խորոված, աւճուխ եւ այլ տեսակի սղանկերներ:

ՆՈՐ ՀԱՍՅԷ՝
 1848 Lawrence Avenue East
 Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶԱՅՆ՝
 (416) 750-7404 կամ (416) 750-7400



ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓԻՒՌ(ՆԵՐ) ՉԵՆ ՊԱՌԱԿՏՈՒԱԾ, ԲԱՅՑ ՉԵՆ ԱԼ ՄԻԱՑԱԾ

Հեղինակութիւնը առանց վարկի կարելի չէ, ոչ ալ վարկը առանց հեռաւորութեան:*

Զօրավար Շարլ տը Կոլ, «Սուրին շեղըը» գիրքին մէջ:

Մեր պատմութեան ներկայ Հանգրուանը կը յատկանշուի ոչ շատ հեռուոր անցեալի պառակտումներու յաղթահարումով, նորերը չեն գիտեր անգամ անցեալի այդ սուր պառակտումները: Թէեւ Հայաստան եւ Սփիւռք(ներ) մէկ ազգ ըլլալու գիտակցուած եւ գործնական ծրագրումներով չեն միացած, դեռ չենք յաջողած ծնունդ տալ անվիճելի հեղինակութեամբ եւ արժէքներու վրայ հիմնուած եւ միութեան կնիքով դեկավարումի:

Անմիջական ճշգրտմ մը. տարակարծիք ըլլալ չի նշանակեր պառակտուած ըլլալ:

Այլ կարծիք ունենալ դրական է մինչեւ այն ատեն, որ կը ձգտինք յաւելեալ պարտականութեան իրականացման եւ ոչ յաւելեալ շահի եւ իրաւունքի ձեռքբերման: Երբ չենք առաջնորդուիր երկխօսութեամբ ընդունելու, որ միւսը եւ միւսները կրնան իրաւունք ունենալ, կը ծնի ամուլ եւ ամբաստանող շատախօսութիւն, կը խորհինք, որ մէզմէ մէկը կամ միւսը, մէկ կամ միւս կողմը, ճշմարտութեան մենաշնորհը ունի: Նման մտածելակերպ եւ անկէ բխած գործելակերպ կ'առաջնորդեն լճացման:

«Լճացում» բառը սովորական է, երբ ան կը բնորոշէ «միւս»ը կամ «միւսներ»ը: Չենք խօսիր «լճացման» իսկական պատճառներուն մասին, անոնք ըլլան ընկերային, տնտեսական, իմացական, արժէքներու, հեռանկարի եւ համակարգի մասին, որոնց աղբիւսին մէջ կը ձլին եւ կը բազմանան ի գին ամէն բանի յաջողութեան ձգտողները, այսինքն՝ արժէքներ եւ հեռանկար անտեսողները: Ասոնք, միջոցներու միջեւ խտրութիւն չզննելով, կը հասնին իրենց շահախնդրական եւ փառասիրական նպատակին, ի հարկին ոտնակոխելով «միւսը» եւ «միւսները», ինչպէս այդ կ'ըլլայ, օրինակ, ընտանեկանութեան, -napotisme,- պարագային, որ գիրքի չարաշուքում է:

Կրկին պէտք է լսել պարտուած Ֆրանսայի ազատարար զօրավար տը Կոլի կեանքի փորձառութեանն ընդհանրապէս իմաստուն դատումը, ըստ որուն, «Հասնելու համար միայն կան անոնք, որ ի գին ամէն բանի կ'ուզեն տեղ հասնել»*: Arriviste-ին մէջ խտացուած իմաստով բառ չգտայ, կ'ըսենք շահախնդիր, փառաստենչիկ, խորամանկ, ճարպիկ: Կը հասնին ոչ միայն այս կարգի մարդիկ, այլ կը գտնեն իրենց շուրջ դարձողներ, «կարկանդակ»էն իրենց բաժինը ունենալու համար:

Պառակտումներու անհետացման չէ հետեւած Հայ ազգային գաղափարական-քաղաքական միտքին պայծառացումը: Համեմատաբար խաղաղ պայմաններու մէջ կը յայտնուին փառասէր եւ տժգոյն միջակութիւններ, «ի գին ամէն բանի տեղ հասնելու» մարմաջ ունեցողներ, որոնք ընկերութեան լճացման եւ փտախտին պատճառ կ'ըլլան: Այս՝ ոչ միայն մեր «փոքր ածու»ին մէջ: Գրականութիւնը կտակած է հզօր պատկերներ, որոնց կը հանդիպինք, օրինակ Ֆրանսացի մեծ գրող Հոնորէ տը Պալգաքի «Մարդկային Կատակերգութիւն» շարքին մէջ, «Ռասմիներ»ը միշտ կենդանի է, նաեւ հայկական ընկերութեան մէջ:

Մեր այնքա՞ն ցաւոտ ներկայ Հանգրուանին, երբ բնական պիտի ըլլար առաջնորդուել ազնուութեամբ, բարի

կամքով, ժամանակի գիտութեան ընձեռած բարիքներով ամբանալով, մեր արմատներուն հաւատարմութեամբ շարունակութիւն ըլլալու յանձնառութեամբ, անյիշահարութեամբ, ողջմտութեամբ, արժէքներու ներշնչումով, չենք յաջողիր ապագայատես ցանկալի միութիւն ստեղծել ազգի հիմնախնդիրներուն լուծման համար: Ներսը եւ դուրսը:

Ինչպէ՞ս եւ ինչո՞վ բացատրել այս միացման դժուարութիւնը: Ինչպէ՞ս կը յաղթահարուի այդ դժուարութիւնը:

Նախ պէտք է կամենալ այդ դժուարութիւնը յաղթահարել: Ապա, ազգային-քաղաքական իրաւ, ոչ ձեւական, ոչ ջոջական գիտակցութեամբ, փորձել «ի գին ամէն բանի տեղ հասնելու», եւ բոլոր միջոցները ընդունելի համարելով գիրք գրակերպ ախտին դէմ պէտք է ցցուել, որպէսզի իմաստութեամբ օգտագործուի ազգին կարողականութիւնը (potentiel), իմացական, գիտական եւ այլ ներուժը, նուաճելով անկո-սաքսոն ողջմտութիւնը:

Ողջմտութիւն՝ որ ինքզինք բանաձեւած է ըսելով՝ «յարմար անձը յարմար գիրքի վրայ» (the right man in the right place), որպէսզի գանգուածը լսէ, հասկնայ առաջադրանքը, ընդունի «դեկավարութեան» խօսքը, նոյնիսկ եթէ ան գինք պիտի անհանգստացնէ: Զանգուածները չեն լսեր, ու կամ կանուխ դիմակներ կը պատեն, ճապկումներով եւ միջոցներու միջեւ խտրութիւն չզննելով, ուրիշները առարկայի վերածող, գիրքնք ձիւն քամակը բարձրանալու ասպանդակ համարողները:

Մեծ, բազմանգամ, հարուստ եւ հզօր ժողովուրդները կրնան դիմանալ ի գին ամէն բանի տեղ հասնելու ձգտողներու (arriviste) յարձակման, բայց բազմիցս հարուածուած, հայրենահանուած, օտարացածներու իր բանակով եւ օտարման ուղիներու վրայ թափառողներու տարտղնուածներով եւ տարտղուողներով, հայրութիւնը չի դիմանար:

Պարտականութեան գիտակից եւ ստրկացումը մերժող մտաւորականութեան կարիք կայ, ներսը եւ դուրսը, լուսաբանելու համար հանրային կարծիքը, զարգացնելու անոր ընդոծին ողջմտութիւնը, որպէսզի իր վստահութիւնը, որ ժողովրդավարական համակարգի մէջ կը խտանայ որպէս քուէ, համարէ քաջութեան գէնք եւ տայ յարմար անձին յարմար տեղին համար: Նոյն մտաւորականութիւնը տեւաբար հաշիւ պիտի պահանջէ, հաշուետուութիւն, որպէսզի գանգուածները գիտնան, թէ ի՞նչ խոստացուած էր, ի՞նչ կարելի է եւ եղած է, չ'ըլլար:

Իրաւ մտաւորականութիւնը դեկավարութեան խթանողն է, պէտք է ըլլայ, որպէսզի դեկավարութիւնները մնան ազգային առաջադրանքներու ուղիղ գիծին վրայ, երբ ձախողին ըսէ, որ պէտք է մեկնին, իրենց լուսարձակները բանան ջոկելու համար կարողութիւնները եւ որակը, ի հարկին հնչեցնելով մեկնումի գանգը, երբ ամուլութիւնը կը տեւէ յաւերժանալով:

«Հեղինակութիւնը առանց վարկի կարելի չէ, ոչ ալ վարկը առանց հեռուորութեան», կ'ըսէ Ֆրանսայի ազատարար մեծ առաջնորդը: Ան գիտէր հեռուորութիւն պահել, անձին օրինակով առաքիւնութիւն դրսեւորել, եւ ձաղկիլ իր երկրին մէջ դրսեւորուող ախտաւոր երեւոյթները, ըսելով՝ «Հասնելու համար միայն կան անոնք, որ ի գին ամէն բանի կ'ուզեն տեղ հասնել»: Եթէ միայն կարենա-

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Երբ ամեն ինչ կը փոխուի...

Կեանքը նոյնը չի մնար, ան յարափոփոխ իրականութիւն մըն է, ու Ֆրանսացի մարաջախտը*, որուն տիտղոսով ալ կազմուեր է «Լափալիսեան ճշմարտութիւն» եզրոյթը, իրաւամբ հարց պիտի տար, թէ չէի՞ք գիտեր, որ այդպէս է:

Հաւանաբար բոլորս ալ գիտենք կեանքի այդ անհերքելի բնոյթը, սակայն գիտնալով հանդերձ, յաճախ չենք ուզեր ընդունիլ, կամ դժուար կ'ընդունինք, յաճախ ալ չենք համակերպիր:

Շարաթ առաւօտ, երբ այս յօդուածը կը մտմտայի ու տակաւին չէի որոշած ինչպէ՞ս գայն բանամ ընթերցողին առջեւ, նախորդ օրուան՝ 11 օգոստոսի Le Devoir- ի “Et cetera” էջին մէջ կարդացի Émilie Folie-Boivin-ի La fin du fun յօդուածը, ուր ան կարօտով կը յիշէ մանկութեան վայելած գուարճութեան դրօսավայրերու հին սարքերը՝ կարուսելները եւ այլն, որոնք սկսած են փոխարինուել նորօրեայ աւելի արդիական աւելի գեղազարդ ու աւելի ապահով սարքերով: Այդ մասին երբ գրողը հարց կու տայ գուարճութեանց պատմութեան մասնագէտ փրոֆ. Laurent Turcotte-ի, թէ այս օրերուն ի վերջոյ կա՞յ բան մը, որ նոյնը կը մնայ, այս վերջինը կը ծիծաղի ու կը պատասխանէ. «Այդ ամենը պարզապէս մեզ կ'անդրադարձնէ, թէ կը ծերանանք: Կ'ապրինք ընկերութեան մը մէջ, որ մշտական նորաձեւութեամբ կը սնանի: Մենք մեզ կը խաբենք այն գաղափարով, թէ մեր այս աշխարհին վրայ մշտականութիւն մը կայ: Ուստի, ամեն անգամ, որ մեր սեփական անցեալէն տարրեր կ'անհետանան, այն տպաւորութիւնը կ'ունենանք, թէ մեր ինքնութեանն մաս մը կը կորսնցնենք»:

Նորոգումը, բարեփոխումը կամ պարզապէս փոփոխութիւնը չի վերաբերիր միայն գուարճութեանց սարքերուն: Կեանքի բոլոր ոլորտներուն մէջ կը պատահի կամ կը յառաջանայ ան: Կը փոխուին ոչ միայն իրերը, առարկաները, միջոցներն ու գործելակերպերը, այլեւ չափանիշներն ու հասկացութիւնները՝ նիւթական թէ բարոյական առումով: Այս վերջինները՝ որպէս հետեւանք առաջիններու փոփոխութիւններուն, եւ ընդհակառակն՝ առաջիններն ալ որպէս հետեւանք այդ վերջիններու փոփոխութիւններուն:

Զիտիւնք ամբողջ պատմութեան ընթացքին քաղաքակրթութեան կրած փոփոխութիւններուն մասին, ոչ թէ այս յօդուածը, այլ հարիւր նման յօդուած ալ պիտի չբաւէր... Միայն մեր ապրած կեանքին ընթացքին մենք որքան փոփոխութիւններու ակնատես, մեղսակից կամ զոհ դարձանք: Առնենք օրինակ՝ ուտեստեղէնը պահելու խնդիրը:

Յիշող կա՞յ կապարապատ այն սառնարանները, որոնց վերի բաժնին մէջ կտոր մը սառույց կը դրուէր: Ամեն օր վաճառորդը այդ կտորը պիտի բերէր մեր տունը՝ ջութի (jute) կտաւի մը մէջ փաթեթուած, ձեռքերը այլեւս վարժուած պաղի պատճառած թմրութեան: Սառնարանին վարի մասն ալ, որ նոյնպէս կը պաղէր, կը ծառայէր քիչ մը ուտելիք՝ կարագ-պանիր ու աւելցուքներ պահելու:

Սառնարանի ու սառցարանի ամբողջ յղացքը փոխուեցաւ, նոյնպէս ուտեստեղէն պահելու միջոցները: Ծարտարարուեստներ զարգացան, ոչ միայն այդ պաղ պահարաններու մարզին մէջ, այլեւ պահածոյի, պատրաստ ճաշերու եւ տակաւին ի՞նչ-ի՞նչ մարդերու մէջ: Հին սառնարաններու կարօտը քաջող կա՞յ արդեօք: Թերեւս ատեն մը անոր ծորակէն ուղղակի պաղ ջուր ունենալը կրնայինք կարօտնալ, բայց արդէն նորահար սառնարանները ա՛յլ ալ կը հայթայթեն:

Սառնարաններուն պէս փոխուեցան կերակուր եփելու յարմարանքները՝ ելեկտրական փուռեր եւ այլն, լուալու եւ լուացուելու յարմարութիւնները, տուն մաքրելու սարքերը եւ մասամբ նորին:

Բայց միայն այս իրերը չեն, որոնք փոխուեցան: Անոնց հետ փոխուեցան եւ մեր ապրելակերպը, մեր առողջապահական ըմբռնումները, մաքրութեան հասկացութիւնը:

Առանին գործերը կատարելու դիւրութիւնը նաեւ կրնէրը ազատագրեց այդ գործերուն «նուիրուելու» պարտաւորութեանն, անոնց առջեւ բացուեցան գործի ասպարէզները: Զարգացան կրնէրու եւ ընդհանրապէս մարդկային իրաւունքներու ըմբռնումները:

Ծամբորդութիւնները դիւրացան, փոխադրական միջոցները բազմացան, հաղորդակցութիւնները հեշտացան, տեղեկութիւններու հաղորդումը դարձաւ անմիջական եւ այլն, եւ այլն:

Սկսան յեղաշրջուել կրթութեան, դաստիարակութեան միջոցներն ալ, հրաշալի սարքերը մի քանի տեղի կտոցողով, կամ նոյնիսկ մատներու հպումով որոնուած ամեն տեղեկութիւն վայրկեանին հասանելի դարձուցին: Ո՞վ այսօր տպուած քարտէզներու վրայ կը փնտռէ իր ճանապարհը անծանօթ վայրերու մէջ: Խելախօսը կրնայ քեզ ուղղել դէպի ուզուած նպատակավայրը:

Ասոնց հետ փոխուեցան նաեւ, դէպի լա՞ւր, թէ՞ դէպի վատը՝ ամուսնութեան, ընտանիքի յղացքները:

Կեանքը ճղճիմ փոքրամասնութեան մը համար դարձաւ աննպատակ, կամ պարզապէս նիւթականի կուտակման մշտական ձգտում, հաճոյքներու անընդհատ հետապնդում, իսկ ջախջախիչ մեծամասնութեան համար՝ օրուան հացը ճարելու եւ գիշերը գլխուն վրայ տանիք մը փնտռելու անվերջ ճիգ:

Մեծ հոյովոյթներու ենթարկուեցան նաեւ ազգի, հայրենիքի, պետութեան հասկացութիւնները, տեղի ունեցան ու կը շարունակեն տեղի ունենալ գանգուածային տեղաշարժեր, իրարու խառնուեցան ու կը խառնուին տարբեր ծագումով մարդկային ամբողջ հաւաքականութիւններ, մշակոյթներ, լեզուներ:

Եւ միթէ այդպէս չէ՞ր եղած ամբողջ պատմութեան ընթացքին՝ հազարամեակներու տեւողութեան: Պարզապէս մենք աւելի արագ՝ իրադարձութիւններու պատահած պահուն անոնց իրագրելի դարձանք ու կը շարունակենք դառնալ:

Կարծես ինչ որ նոյնը մնաց ընչաքաղցուցութիւնն է, ուրիշին ունեցածը յափշտակելու կիրքը, շամբերու օրէնքը՝ իրաւունքը զօրաւորին...

Կան սակայն տակաւին խենթեր, որոնք կը հաւատան մարդը անասունէն ասունի վերածելու, սատանայէն՝ հրեշտակի ու յամառօրէն կը պայքարին ատոր համար: Հրեայ Դաւիթին ու Գողթաթին յաւերժական պայքարն է ասիկա, կամ Սասունցի Դաւիթին ու Մարայ Մելիքին գուպարը:

Որ է՞ նաեւ մեր պայքարը, մեր ինքնութիւնն ու իրաւունքները պահելու եւ պաշտպանելու գոյամարտը: Բայց ունի՞ք արդեօք պէտք եղած գէնքերը՝ Սուր կէճակին ու Քուռիկի Զալալին:

Այս մասին ալ յաջորդել:

ՎՐԷԺ-ԱՌՄԷՆ

* Jacques de Chabannes, seigneur de La Palice (1470–1525)

«Բժիշկին Գ. Խօսքը» եւ «Բժիշկին Դ. Խօսքը» գիրքերուն շնորհահանդէսին արտասանուած խօսք՝ Համբիկ Գարայեանի կողմէ

Մեծ ուրախութիւն եւ հպարտութիւն է ինծի համար այսօր, ներկայացնել բժիշկ Կարպիս Հարպոյեանի «Բժիշկին Գ. Խօսքը» գիրքերու շարքը, «Բժիշկին Գ. Խօսքը» եւ «Բժիշկին Դ. Խօսքը» գիրքերուն հրատարակութեան առթիւ:

Ընդհանրապէս, պաշտօնական այսպիսի ներկայացումներ կը սկսին գրողին կենսագրականով: Սակայն թոյլ տուէք, որ խօսքիս առաջին բաժնով ձեզի ներկայացնեմ բժիշկ Կարպիս Հարպոյեանը, իմ անձնական փորձառութեանս ընդմէջէն:

Փոքր տարիքէս ծանօթացայ բժիշկ Կարպիս Հարպոյեանին իբրեւ «տոքթոր ամմօ»: Մայրս, որ ինքն ալ Հարպոյեան ընտանիքի զաւակ է, ազգային եւ անձնական կեանքի մարդերէն ներս պայքարի ոգին մեր մէջ թրծելու իր առաքելութեան մէջ շատ անգամ կեանքէ առնուած դրուագներէ օրինակներ կը բերէր: Այդ դրուագներուն ընդմէջէն ես նաեւ ծանօթացած էի իր հարագատներուն, որոնցմէ, իմ մանուկ ակնջիւս կը հնչէր բժիշկ Հարպոյեանին անունը: Ան Հարպոյեան ընտանիքին առաջին բժիշկն էր, իսկ ես դպրոցական հասակիս, երբ կը լսէի իր մասին, կարծէք ա՛լ աւելի կ'ուռճանար մէջս ուսումի տենչը: Շուտով, մանկական երեւակայութեանս մէջ, «տոքթոր ամմօ»ն դարձաւ ժրջան աշխատանքի եւ ուսումնատենչութեան տիպար մը: Հասան համալսարանական օրերս, Լիբանանի պատերազմի օրերուն, երբ մարտահրաւէրները արագընթացօրէն կը զարգանային, երբ ամէն օր, օրինակ եւ ապօրինի գինեակներու պատենչներէն պէտք էր անցնել՝ հասնելու համար Պէյրութի Ամերիկեան Համալսարան, երբ առեւանգումներն ու սպանութիւնները սովորական առօրեայ դարձած էին, այս բոլորին դիմաց ժրջան աշխատանքն ու ուսման տենչը ամենէն հիմնական հրամայականներն էին:

Այսպէս, այն դրոշմը որ «տոքթոր»ը թողած էր իմ մանկութեանս յիշատակներուն մէջ, մղիչ ուժերէն մին դարձաւ՝ հասնելու աւելի բարձրին, եւ ուսումն ու գիտութիւնը վերածնցին շարունակական գործընթացի, այլեւ կեանքի եւ պարկեղանի:

Տարիներ անցան, Պէյրութէն Տուպայ եւ ապա Գանատա փոխադրուելով, այս անգամ առիթը ունեցայ աւելի մօտէն ծանօթանալու «տոքթոր ամմոյիս»: Եւ կարծէք մանկութենէս արդէն նախածրագրուած ըլլար իմ հոս գտնուելիս այսօր, Գանատայի ափերուն, այս գեղեցիկ շնորհատակէտին, ներկայացնելու իր «Բժիշկին Խօսքը» աշխատասիրութիւնը:

Ո՞վ է բժիշկ Հարպոյեանը:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան իր բժշկական ուսումը աւարտած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ, 1965-ին: Հետեւած է Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցի «քիթ-կողորդական» մասնագիտական բաժանմունքին 1965-1969: Առ ի գնահատանք՝ հրաւիրուած է մաս կազմելու նոյն մասնագիտութեան բաժանմունքին մէջ՝ իբրեւ դասախօս-ուսուցիչ, «Associate Member» տիտղոսով, 1969-1975:

Ան աւելի քան 35 տարի աշխատած է որպէս մասնագէտ վերաբոյժ իր մասնագիտութեան մէջ Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցին եւ կարգ մը այլ հիւանդանոցներու մէջ:



Բժիշկ Հարպոյեան ունի բժշկական ուսումնասիրական շարք մը յօդուածներ՝ բժշկական միջազգային գրականութեան մէջ: Այդ ուսումնասիրութիւններէն յիշատակելի է հետեւեալը.

Եղջերիկի ընդոծին տարածման եւ լսողական ջղի յարաճուն խլութեան «Congenital corneal dystrophy with Progressive Sensori-neural Deafness» միատեղ գոյութիւնը մէկ ընտանիքի մէջ երեք անձերու մօտ՝ առաջին անգամ ըլլալով համաշխարհային բժշկական գրականութեան մէջ յիշատակուած է իր կողմէ 1971-ին: Հետագային, այս երկու հիւանդագիտական երեւոյթներուն միատեղ գոյութիւնը՝ իբրեւ նոր համախտանիշ (syndrome) բժշկական համաշխարհային գրականութեան մէջ անուանուած է «HARBOYAN SYNDROME», հայերէնով՝ «Հարպոյեան համախտանիշ»:

Բժիշկ Հարպոյեան ունի բազմաթիւ բժշկական ուսումնասիրական յօդուածներ միջազգային բժշկական գրականութեան մէջ. իսկ իր բժշկական եւ առողջապահական, ինչպէս նաեւ հայ կեանքը յուզող յօդուածները, երկար տարիներէ ի վեր լոյս կը տեսնեն սփիւռքի հայկական գանազան օրաթերթերու եւ պարբերաթերթերու մէջ:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան իր գործօն մասնակցութիւնը բերած է ազգային հասարակական կեանքէն ներս եւ ստանձնած է զանազան պատասխանատուութիւններ եւ պաշտօններ, որոնցմէ կը թուեմ մի քանին. Լիբանանի Թեմի ազգային երեսփոխան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ընդհանուր Ժողովներու, Քաղաքական Ժողովի եւ Ուսումնական Խորհուրդի Ժողովներու ատենապետ, Գանատայի Հայոց Թեմի ազգային երեսփոխան եւ ազգային վարչութեան փոխ ատենապետ. եղած է նաեւ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ, Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ եւ Գանատայի Շրջանային Վարչութեան անդամ, «Ճիւնիշեան Հիմնարկութեան» Լիբանանի Խորհրդատու Մարմնի անդամ, ինչպէս նաեւ Լիբանանահայ Բժշկական միութեան գործադիր վարչութեան անդամ:

«Բժիշկին Խօսքը» շարքին կողքին, բժ. Հարպոյեանի գրական գործերէն հարկ է յիշել Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ 2015-ին հրատարակուած «Խաչելութեան ճանապարհը»

եւ «Խաչելութեան յարութիւն» հատորները:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան 2009-ին պարգեւատրուած է Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կողմէ Համազգայինի շքանշանով՝ երկար տարիներ անսակարկ նուիրումով հայ հասարակական կեանքի եւ յատկապէս Համազգայինի ծիրէն ներս ունեցած ներդրումին առ ի գնահատանք:

Ան պարգեւատրուած է նաեւ Գանատայի Հայոց Ազգային Առաջնորդարանի «Յովհան Մանդակունի» ազգային-եկեղեցական ծառայութեանց շքանշանով, 27 Սեպտեմբեր 2015-ին:

Ամուսնացած է էլիզապէթ Պողոսեանի հետ եւ բախտաւորուած է երեք դուստրերով. Դալար, Լոռի եւ Փաթիլ:

Գալով Բժիշկ Հարպոյեանի «Բժիշկին Խօսքը» գիրքերու շարքին, «Բժիշկին Ա. Խօսքը» հրատարակուած է 2000 թուականին: Ապա 2011-ին հրատարակուած է իր երկրորդ աշխատասիրութիւնը՝ «Բժիշկին Բ. Խօսքը», իսկ 2015-ին՝ «Բժիշկին Գ. Խօսքը» եւ «Բժիշկին Դ. Խօսքը»:

«Բժիշկին Խօսքը» այս չորս հատորներու շարքին մէջ կը գտնենք 29 նիւթեր կամ գլուխներ, որոնցմէ իւրաքանչիւրին մէջ բազմաթիւ յօդուածներ ընդգրկուած են. քանի մը օրինակ տալու համար այդ գլուխներէն յիշենք.

- Արիւն եւ արեան յարակից հիւանդութիւններ
- Մարմնի տարբեր բաժիններու հիւանդութիւններ
- Բժիշկ, բժշկութիւն եւ բժշկական բարոյակնութիւն
- Դիմադրողականութիւն եւ յարակից հիւանդութիւններ
- Ծերութիւն եւ յարակից հարցեր
- Մանկական հարցեր եւ հիւանդութիւններ
- Քաղցկեղ եւ այլն:

Ուրեմն, կարելի է ըսել, որ այս չորս հատորները միասնաբար կը կազմեն առողջապահական ու բժշկական ժողովրդական հանրագիտարան մը, ուր բազմաթիւ ախտեր ու ցաւեր, հարցեր եւ երեւոյթներ կը բացատրուին դիւրամատչելի լեզուով, գծապատկերներով եւ լուսանկարներով՝ աւելի յստակ գաղափար մը տալու համար ընթերցողին:

Նշելի է նաեւ բժ. Հարպոյեանի տարած աննախընթաց աշխատանքը, մասնաւորաբար նոր բառերու ստեղծման տեսակէտէն: «Բժիշկին Դ. Խօսքը» հատորին վերջաւորութեան, 126 էջ տրամադրուած է բառացանկերու՝ չորս հատորներուն մէջ օգտագործուած բժշկական, գիտական եւ յարակից բառերուն վերաբերելով: Այսպէս, իրարու կը յաջորդեն անգլերէն-հայերէն, հայերէն-անգլերէն թարգմանական բառացանկերը, ապա հեղինակին ու խմբագրին կողմէ առաջարկուած նոր հայերէն բառերու ցանկը, ուր տեղ գտած են շուրջ 150 նոր բառեր: Նոր բառերու այս հաւաքածոն

թէ՛ գիտական եւ թէ՛ ազգային կարեւորութիւն ունի. յոյսով ենք, որ այդ ցանկը կը հարստանայ նոր բառերով եւ աշխատասիրութիւններով:

Ուրեմն «Բժիշկին Խօսքը» աշխատասիրութիւնը եզակի է երեք գլխաւոր կէտերու մէջ.

Ա) «Բժիշկին Խօսքը» իր բժշկագիտական պատգամէն անդին երթալով «Բժիշկին Գ. Խօսք»ին մէջ մեզի կը ներկայացնէ նաեւ հայ բժշկութեան պատմութիւնը, այլեւ հարստութիւնը հին դարերէն մինչեւ 19-րդ դարու վերջը. հոն կը կարդանք նաեւ հեղինակին ազգային եւ փիլիսոփայական մտորումները. այսպէս օրինակ, երբ ան կ'անդրադառնայ ներկայ բժշկութեան, կ'ըսէ «Ամէն մարդու մէջ Աստուած մը կայ» եւ ապա կ'անցնի հաւատքի դերին եւ բժշկական հրաշքներուն. Այո՛, ան չի վարանիր խօսել «հրաշք»ի մասին, բան մը, որ հազուադէպ է տեսնել բժշկական շրջանակներէն ներս.

Բ) «Բժիշկին Խօսք»ին մէջ կը գտնենք բժշկական ճոխ բառամթերք. այս գծով բժիշկ Հարպոյեան «Բժիշկին Գ. Խօսք»ին «Նախաբան»-ին մէջ կ'ըսէ. «Ես կը փորձեմ զարգացնել գրութիւններս գիտական եւ բժշկական հայերէն բառամթերքով», ապա կը շարունակէ ըսելով. «Կը փորձեմ նաեւ հայացնել կարգ մը բժշկական բառեր եւ հիւանդութիւններու անուններ՝ փոխարինելով գանոնք հայերէն արմատ ունեցող բառերով»:

Գ) «Բժիշկին Խօսքը», իր 214 յօդուածներով ընթերցողին կը փոխանցէ օգտակար գիտելիքներ առողջապահութեան եւ բժշկութեան մարդերուն վերաբերելով՝ գրուած պարզ ու հասկնալի լեզուով, որոնք կը վերաբերին ոչ միայն բժիշկին անմիջական մասնագիտութեան՝ քիթ-կողորդ-ականջի հիւանդութիւններուն, այլ նաեւ ընդհանրապէս ժողովուրդը հետաքրքրող խնդիրներուն, հիւանդութիւններուն եւ անոնց առնչուած հարցումներուն: Հետեւաբար, կ'արժէ իւրաքանչիւր տան գրադարանին մէջ ունենալ «Բժիշկին Խօսքը»:

Վերջապէս, սիրելիներ, բժ. Հարպոյեանի «Բժիշկին Խօսքը» երթը, որ սկսաւ 2000 թուականին, տակաւին կը շարունակուի, եւ բժիշկ Հարպոյեան կը հաստատէ, թէ արդէն պատրաստած է Բժիշկին Ե. Խօսքը, եւ Զ. Խօսքն ալ ընթացքի մէջ է: Սակայն, բժշկական գիտելիքներու զարգացման եւ ճարտարապետական յեղափոխութեանց (industrial revolutions) ու համաշխարհայինացման (globalization) հետ քայլ պահելու համար, աշխատանքը պէտք է շարունակուի, որպէսզի հայ բժշկական գրականութեան ջանքը վառ պահուի ու մնայ ժամանակակից եւ մատչելի մեր յաջորդ սերունդներուն համար՝ յանուն հայապահպանման եւ յանուն մեր մշակոյթի բարգաւաճման:

Վարձքը կատար, Տոքթոր: Համբիկ Գարայեան

Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ կայքէջը՝ www.sourphagop.net

ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը



Ատանա 1909-ի կոտորածներէն ետք

Կիլիկիոյ ԱՂԷՏԸ

3-դ

Արդ, Իթիտալի 33-րդ թիւով հրապարակուած նշեալ յօդուածներէն հատուածներ (պահուած է թարգմանիչին՝ Թերզեանի լեզուէն):

Իսմայիլ Սաֆայի «Սոսկալի Ապստամբութիւն Մը» յօդուածէն. «Աւա՛ղ որ հայոց սրտերուն խորը հաւաքուելով արմատացած, փոթորկոտ եւ ոճրապարս պոռթկումով մը օրէ օր փքացող, վերջապէս եղբրական գոռուներով հիւանդագին եւ արատաւոր մրմունջներով եռացող բարկութեան եւ անկասկածեան հեղեղը երկիրը կործանեց (...)

Հայերը տակաւին կառավարութեան ոչ մէկ գէշք չի յանձնեցին, ասոր համար կրակին վերսկսելու եւ հիմակուան լուծութիւնը առժամանակեայ գիւնդադար մը ըլլալու հաւանականութիւնը՝ իսլամական միտքերը սաստկօրէն կը զբաղեցնէ եւ կը յուզէ: Տեսնե՞ք՝ թէ վերջը ի՞նչ պիտի ըլլայ: Անխելք հայերը գմեզ, հայրենիքը, ինքզինքնին ալ կործանեցին»⁵²⁵:

Պիւրհան Նուրիի «Հայերը Կրնա՞ն Տէրութիւն Կազմել» յօդուածէն. «Աւա՛ղ...եթիւ ութը ամիս առաջ փայլուն գովասանքներով մեր ձեռքերը սեղմած այն ձեռքերը՝ հիմա մեր կործարին բարկութեամբ եւ կատաղօրէն մարթինի, մալգէրի, ատրճանակի գնդակներ եւ ուղեքեր կը նետեն. արդեօք այս փշոտ ձեռքերն էին անոնք (...)

Երբ բոլոր օսմանցիները կը պաշտեն Օսմանցիութիւնը, անոնք կը նախատեն, կ'ուզեն վերցնել այդ անակաւնը իրենց վրայէն: Բայց վստահ թող ըլլան, որ այլեւս սահմանադրական կառավարութիւնը այս կարգի վատութիւններու չի պիտի տուկայ: Տէրութիւնը կարող է չարագործներն անմիջապէս զսպելու, եւ այս կարողութիւնը երթալով պիտի աւելնայ»⁵²⁶:

Իսկ Իհսան Ֆիքրիի «Խառնաշփոթութեան Երեւոյթներ»ը՝ Աղէտին պատրաստութեան եւ գործադրութեան հիմնական մտավարկութիւնը ունի՝ փաթոյթին մէջ ստապատիր մեկնաբանութեան մը:

Ղամտութիւնը հրաւիրուելիք տեղ մը — հայոց կրօնական Աթոռին ամենէն մեծերէն՝ Կիլիկիոյ մասին մէջ — հաւաքուելի որոշելով, հայկական վերջին դէպքերէն ասդին՝ խուճար-խուճար Ատանա դիմած եւ այս կողմերուն մէջ սոսկալի բազմութիւն մը կազմած էին:

Մարաշէն, Հաճընէն, Խարբերդէն, Տիգրանակերտէն եւ Անատոլի հայաբնակ գաւառներէն այնքան հայ թափած էր, որ նախապէս մէկ ընտանիքի բնակութեան յատուկ տան մը մէջ՝ 5-10 հայ ընտանիքներու տեղաւորուելը կատարեալ զարմանքով կը տեսնէինք:

Մենք իրենց վերաբերումներէն ու վարմունքներէն հասկնալով հանդերձ, որ հայերը այս շրջանակներուն մէջ մեծամասնութիւն կազմելով խռովութիւն մը պիտի հանեն եւ ինքնավարութիւն պիտի պահանջեն, բայց նորէն կարելի եղածին չափ համաձայնութեամբ՝ սխալ գաղափարները ցրուելու կ'աշխատէինք, որովհետեւ այնպէս կը կարծէինք, որ հայերուն ներկայ վիճակը այդ տեսակ գործի մը ձեռնարկելու թոյլատու չի պիտի ըլլար... Կիլիկիոյ հողամասին կեդրոնն եղող Ատանայի մէջ բախտի փորձով մը ինչ որ ալ ըլլայ խռովութեան մը կրակը բռնկեցնելու համարձակեցան: Թէեւ քաղաքական վերջաւորութիւնը չենք գիտեր, պարզուող ցաւագին վիճակին նախելով՝ թէ իրենց, թէ՛ թուրքերուն եւ թէ՛ քաղաքին կործանումին պատճառ ըլլանին կասկած չի վերցնեք»⁵²⁷:

Յայտնապէս, Ֆիքրիի յօդուածը իր մէջ չարամիտ ձեռնածութեամբ ամփոփած է ոճրագործութեան արդարացումին գլխաւոր կէտերը, եւ իր կարգին նետած կրակ մը, որ գիտէր, թէ հայերուն այն ժամանակի վիճակը անշատողական գործի մը ձեռնարկելու թոյլատու չէր, եւ գիտէր՝ թէ հայերուն համար կործանումը մեծ պիտի ըլլար, եւ ոչ թէ թուրքերուն:

Եւ 9 Ապրիլին կանխատեսութիւն մը պիտի կատարէր «Ժամանակ» օրաթերթի խմբագիրը՝ Միսաք Գոչունեան (Քասիմ), եւ առաջին ջարդին մէջ տեսնէր բովանդակ Կիլիկիոյ համար որոշ ծրագրով կազմակերպուած հարուած մը, որ ամբողջ տարածքը արհաւիրքի պիտի ենթարկէ եւ քարուքանդ ընէ»⁵²⁸:

Կանխատեսութիւնը «Ի՞նչպէս կը վերջանայ Ատանայի Ջարդը» վերտառութեամբ խմբագրականին մէջն է: Ըսուած է. «Դժբախտութիւնը հետզհետէ կը ծաւալի: Սուրը, կրակն ու թալանը վարակիչ հիւանդութեան մը նման կը սպառնան ամբողջ շրջանը ընել Անատոլիին:

Ինչպէս հեռագիրները կը ծանուցանեն, աղէտը Ատանայի գրեթէ մէկ քառորդը բնաջինջ ընելէն ետք՝ տարածուած է ալ ու ձախ՝ սկսելով Գօղանէն, Հաճընէն մինչեւ Մարաշ, աւելի կամ նուազ սաստկութեամբ: Ո՛ւր պիտի երթայ ասոր վախճանը: Ո՛վ կ'երաշխաւորէ որ վաղը միւս օր Այնթապ եւ Հալէպ, ինչպէս նաեւ ամբողջ Անատոլուն միեւնոյն տեսնէն չբռնուին (...)

Սովոր արդէն իր աւերը գործած էր եւ մենք երբ անոր վրայ միայն կ'ողբայինք, եւ ժողովրդէն տրուած օգնութիւնները հազիւ անոնց աղ ու պղպեղ կ'ըլլային, ահաւասիկ անդամներն ու աշխարհաւէր պատուհաս մը, որուն վարակիչ հանդամանքը կ'ահաբեկէ ամբողջ Օսմանեան ազգը»⁵²⁹:

ԳԱՌՆԻԿ Ա. Բ. Գ.

ԱՂԲԻԻՆՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 525.- ԹԿԱ, էջ 64, 70:
- 526.- Ն, էջ 71, 72:
- 527.- Ն, էջ 75, 76-77: Այս նոյն հատուածին նկարագրութիւնը կարելի է գտնել նաեւ Մուշեղ Եպիսկոպոսի գրքոյկին մէջ, տե՛ս ՄԱՊ, էջ 56: Բայց ուշագրաւ է, որ մինչ Թերզեան անոր տեղ ցոյց տուած Իթիտալի 33-րդ թիւը, Եպիսկոպոսը նշած է, թէ հատուածը 84-րդ թիւէն է: Արդեօք Ֆիքրի 33-րդ թիւով հրապարակած իր նոյն ըսածները ծախած է նաեւ 84-րդ թիւով: Ստուգելի կը մնայ:

Հատուածին նկարագրութիւնը ՄԱՊի մէջ. «Այդ յօդուածին մէջ Իհսան Ֆիքրի կը գրէ, թէ հայերը կարգ մ'ապարդիւն եւ արիւնոտ փորձեր յետոյ, յուսահատ՝ Հայաստանի մէջ իրենց անկասկածեալ նպատակը իրագործելու կարելիութենէն, իրենց ամբողջ ուշադրութիւնը Կիլիկիա դարձուցին. սկսան համախմբուել այդ միջավայրին մէջ, ուր կը գտնուէր իրենց եկեղեցական բարձրագոյն Աթոռը — Սոյո Կաթողիկոսութիւնը (Թերզեան քարգմանած է՝ «հայոց կրօնական Աթոռին ամենէն մեծերէն» Կիլիկիոյ մասին մէջ)», եւ ուր եւրոպական միջամտութիւն մը ստեղծելու աւելի դիւրութիւններ կային ու հոն պատրաստուեցան իրագործել ջանալ իրենց անշատողական ազգային դիտաւորութիւնը»: Կարելի է այստեղ արձանագրել Եպիսկոպոսին անդրադարձը, որ գրի առնուած է յետ կոտորածներուն եւ աւերումին լրման, մինչեւ 3/16

Մայիս 1909. «Յօդուածագիրը իր այդ տողերով պարզապէս ըսել կ'ուզէ, թէ հայերուն ենթադրական այդ ապստամբութիւնը եւ իրենց նպատակին գործադրութիւնը արգիլելու եւ խափանելու համար էր, որ կառավարութիւնը հարկ տեսաւ Ատանայի եւ շրջակայից ջարդերը պատրաստելու (...)

528.- ԺԿ, Հայկական Լուրեր, 9-22 Ապրիլ, 1909, էջ 3:

529.- Միսաք Գոչունեան, «Ի՞նչպէս կը վերջանայ Ատանայի Ջարդը», ԺԿ, 9-22 Ապրիլ, 1909, էջ 1:


ՏԵՐԵԻԱԹԱՓ ԾԱՔԷ ՕՀԱՆԵԱՆ ՊԷԶՃԵԱՆ

Շատ հաւանաբար ծնած էր Գոնիա, 1920-ին, եւ ոչ թէ Պէյրուսի եւ 1922-ին, ինչպէս պաշտօնական վայրն ու թուականը կը նշեն: Ծնած էր տան մէջ Դաւիթ եւ Հիւսնիկ Օհանեանի: Տարագիր՝ ծնողքին հետ հասած էր Լիբանան: Ժամանակ մը մնացած ձիւնիկ որբանոցին մէջ, ուր հայրը տեսուչ կարգուած էր: Ետքը՝ Դաւիթ Հայաշէնի մէջ կառուցած էր համեստ բնակարան մը, եւ ընտանիքը այնտեղ հաստատուած: Դաւիթ շուտով ծխական կեանքին մասնակից դարձած էր, եւ իր բաժինը բերած Հայաշէնի Ս. Յովհաննու կարապետ եկեղեցւոյ շինութեան աշխատանքներուն: Շաքէ փոքր տարիքէն եկեղեցիով մեծցած էր: Յաճախած էր Էջրէֆիէի Ազգային Վարժարանը: Նախակրթարանը աւարտած էր 1936-ին: Ապա դերձակութիւն ստրված էր եւ աշխատած այն օրերուն հանրաժան

նօթ ֆրանսական հաստատութեան մը մէջ, ուր զարգացուցած էր Նախակրթարանին մէջ ստրված ֆրանսերէնը: 1941-ին ամուսնացած էր Անտոն Պէզճեանի հետ, եւ հարս գացած՝ Գարանթինա, 10 հոգիներէ բաղկացած Պէզճեաններու տունը, ըստ հին կարգին: Անտոն եւ Շաքէ Պէզճեան իրենց սեփական տունը ունեցած էին Ժաթառուի մէջ: Ծնած էին Ժիրայրը, Ռիթան, Ռաֆֆին եւ Նորայրը: 1966-ին, Անտոն կաթուածահար կ'ըլլար: Շաքէ մեծ գուրգուրանքով զայն կը խնամէր չորս տարիներ, բայց կը կորսնցնէր 1970-ին: Սգաւոր այրին իր միջնակարգութիւնը պիտի գտնէր Լիբանանի Օգնութեան Խաչին անդամագրուելով: 1975-ին կը սկսէր Լիբանանի քաղաքացիական պատերազմը: Բազում ԼՕՍՎ-ականներու հետ, ինքն ալ կը ծառայէր մեր ժողովուրդին, ամենօր-

եայ ներկայութեամբ Էջրէֆիէի Ազատամարտ ակումբին մէջ: Քաղաքացիական պատերազմը քառսային դառնալու վրայ էր: Շատ ընտանիքներ պիտի ցիրուցան ըլլային: Պէզճեան ընտանիքն ալ ցիրուցան եղաւ: Շաքէ պիտի հաստատուէր Մոնթրէալ: Իր Մոնթրէալեան կեանքը հարստացաւ ընտանեկան երջանկութեամբ, եւ 7 թուանիկներով ու 3 ծոռնիկներով: Նաեւ հարստացաւ ՀՕՄ-ի Սօսէ մասնաճիւղին իր անդամագրութեամբ, անոր ծառայութեան իր ներդրած մասնակցութեամբ: Վերջերս ինկած, ձեռքը կտորած եւ հիւանդանոց փոխադրուած էր: Ապա վերադարձած տուն: Ուր իր հոգին աւանդեց Շաքաթ 29 Յուլիսի առաւօտուն:

Ս. Պատարագը, հայ աղօթքը, հայ ոտանաւորը եւ հայ երգը իր շրթներուն վրայ մեկնեցաւ այս աշխարհէն:

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաքաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ նոյն յատագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կէսօրուայ ժամը 12:00-1:00 OMNI 1 կայանէն:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron:
HD616 կամ SD16

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Շաքաթ - 08:30 (առաջին սիւտու) եւ 1:30am
Կիրակի - 3:30pm
Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am
Երեքշաբթի - 12:00pm
Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm
Հինգշաբթի - 12:30pm, 12:30am
Ուրբաթ - 3pm
Ուղիղ արձակու՝ www.icitelevision.ca

Linda Kharaboyan | Notaire Notary
Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցէ մօզի
Vos affaires. À cœur.
Therrien Couture | 3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com

VIZUALIS
optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal
(514) 744 4313
Berj Merdjanian
Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction
647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3
photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager
COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CEL) • CRÉATION D'HÉRITAGE • REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650
Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիրը ունի 20 հայ թարսի վարորդի Միքայէլ շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX
RE/MAX 3000 inc. Agence Immobilière
Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN
POSE D'ONGLES
RÉSINE ET POWDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES NATURELS
Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker
Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance
11820 General Giraud Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders
416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY
180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com
Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ 26-ԱՄԵՆԱԿ
Կազմակերպության միջոցով՝ Քեյպեի Միացյալ Մարմնի
Շարաք, 23 Սեպտեմբեր 2017

ՄՈՆԹՐԷԱԼ

Հայ Օգնության Միության Մոնթրեալի «Սուէ» մասնաճյուղի ձեռնարկ՝
Թեյասեղան, Հոկտեմբեր 1, 2017 կեսօրէ ետք ժամը 4:00-ին:

ՄՈՆԹՐԷԱԼ

Հովանավորութեամբ՝ ՀՅԴ Հայ Դատի Գանատայի Շրջանային յանձնախումբին, Համագային Հայ Կրթական և Մշակութային Միության «Սանահին» մասնաճյուղի Գրական յանձնախումբը ձեռք կը հրաւիրէ ներկայ գտնուելու հեղինակ, լրագրող, պատմաբան և համալսարանական դասախօս Դոկտ. Վիգէն Չեքերեանի «Open Wounds: Armenians, Turks and a Century of Genocide» գիրքի շնորհահանդէսին, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 6 Սեպտեմբերի, երեկոյան ժամը 8:00ին, Մոնթրեալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահէն ներս:

Այս հատորով Դոկտ. Չեքերեան ջարդին մասին չէ որ կ'անդրադառնայ, այլ շեշտը կը դնէ մէկ կողմէ Թուրքիոյ ուրացման փառաբանականութեան վրայ, միւս կողմէ Թուրքիոյ բարեփոխման գործընթացի ընդմէջէն որոշ թապուներու վերացման մասին, անդրադառնալով փրօսական հարցին և այլ պատմա-փառաբանական ոլորտներուն: Հետաքրքրական այս գիրքը, անգլերէն լեզուով ըլլալուն հիանալի փարզութիւն մը կը հանդիսանայ օտար հանրութեան:

Գիրքին ներկայացումը պիտի կատարուի հայերէն լեզուով, ձեռնարկին մուտքը ազատ է և տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն: Կը սպասենք Ձեզ մեծ թիւով:

Համագային «Սանահին» մասնաճյուղի Գրական յանձնախումբ

Համագային «Թէյ, սուրճ և Կարծիքներ» ակումբը կը կազմակերպէ «Ժուպրան Խալի ժուպրանն ու Թուրքերը»: Կը ներկայացնէ՝ Արուեստարան Դոկտ. Մովսէս Ծիրանի Հերկէլեան հրատարակած յատկապէս Լիբանանէն: Չորեքշաբթի Սեպտեմբեր 13, 2017 ժամը 7:30-ին, գեղարուեստական հակիրճ յայտագիր և հիւրասիրութիւն: Մուտքի նուէր \$5:

ԼԱԻԱԼ

ՀՄԸՄ Լաւալի Մասնաճյուղի Տարեկան Դաշտահանդէս- Picnic, Անուշեղէնի Վաճառք Bake Sale: Խորոված և հանելի ժամանց, Շարաք և Կիրակի. 26 և 27 Օգոստոս 2017, Լաւալի Հայ Կեդրոնի շրջափակին մէջ: Մուտքը Ազատ: Մարզական խաղեր փոփոխուող համար, յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել.- Եղբ. Եսայի Թորոսեան (514) 821-5050, Քոյր Սոնա Լախոյեան (514) 979-6272: Homenetmenlaval@yahoo.ca

ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ

ՀՅԴ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» Կոմիտէութիւնը բարի ապաքինում կը մաղթէ ընկեր **ՂԱԶԱՐ ԳԱԼԱՅՅՆԱՆ**ին:

ՍՓԻԻՌԷ... Սկիզբը էջ 9

յինք, ներսը և դուրսը զանոնք հեռացնել, «հասնելու համար միայն կան անոնք, որ ի գին ամէն բանի կ'ուզեն տեղ հասնել»ու arriviste-ները, որոնք զիրար կը կոխկռտեն, ներազգային իսկական միութեան դարպասը կը բացուէր:

Դարպաս՝ որ փակ պիտի մնայ այնքան ատեն, որ ժողովուրդի ընդոծին ողջմտութիւնը և անկլօ-սաքսոն the right man in the right place-ի իմաստութիւնը չյաղթանակեն:

Անկախ մտաւորականութեան կարիք կայ, այնպէս ինչպէս զայն սահմանած է Պերդրանտ Ռասըլը. «Եւ կը խորհիմ, որ իմաստասէրին պարտականութիւնն է ըլլալ կարելի չափով քիչ ձեւազեղծող հայելի մը»***:

Երբ օր առաջ բազմաթիւ թերթեր լայնօրէն անդրադարձան պատմական մեծ նշանակութիւն ունեցող Սեւրի դաշնագրին: Բայց եթէ կամ տասը միլիոն հայերէն միայն մէկ հոգի ուխտի երթալու պէս այցելած է այն անձի շիրմին, որուն անունը խորհրդանիշն է այդ փաստաթուղթին:

Երբ իրաւ մեծերը կը մոռցուին իրենց հինգած շիրմաքարերուն տակ, ինչպէ՞ս հեղինակութիւններ կրնան յայտնուիլ:

Յիշեցում՝ որ ձեւազեղծող հայելի չէ, անաղմուկ խոշորացոյց հայելի է...

*L'autorité ne va pas sans prestige, ni le prestige sans l'éloignement,

Charles de Gaulle, Le fil de l'épée

** Il n'y a que les arrivistes pour arriver. Charles de Gaulle.

*** Գաղափարներու պատմութիւնը (1959), Պերթրանտ Ռասըլ (1872-1970),

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ - ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր անոնց որոնք անձամբ, ներկայութեամբ, նուիրատուութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով և այլ միջոցներով ցաւակցեցան յարգեցին մեր որդեկան յիշատակը և ցաւակից եղան մեր սուգին՝ ընկ. **ՇԱՔԷ ՏԵՐ ՄԵԼՔՆԵԱՆ-ՄԻՆԱՍԵԱՆԻ** մահուան տխուր առթիւ:

Հանգուցեալին մահուան փարսունքին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Օգոստոս 2017, Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի: Աւելի Սագիգ և Տէր Մեղիմեան ընտանիքներու կողմէ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ - ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք՝ բարձրաշնորհ Խաժակ արք. Յակոբեանին, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ գերաշնորհ հայր Գեղարդ Օ. Վրդ. Քիւսպէկեանին - արժանապատիւ Տէր Կոմիտաս աւագ փահանայ Փանոսեանին, Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Զարեհ աւագ փահանայ Զարգարեանին, Կաթողիկէ Սուրբ Գրիգոր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ գերայարգելի Նիկա վարդապետ Գիրէջեանին, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ վերապատուելի Սերոբ Մկրտիչեանին, Սողոմոն Թէլիլիբեան կոմիտէութեան, Համագայինի Շրջանային «Գլածոր» մասնաճյուղի վարչութիւններուն, ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճյուղի վարչութեան, ՀՕՄ-ի Ամէնօրեայ Վարժարանի կրթական և ուսուցչական կազմերուն, Յակոբ Յանապետեանին, Նոր Հայ Հորիզոն հեռատեսիլի տնօրէնութեան, մեր հարազատներուն, բարեկամներուն և բոլոր անոնց, որոնք անձամբ, նուիրատուութեամբ, յոյուածով, բացիկով, ե-նամակով, հեռաձայնով և այլ միջոցներով ցաւակցեցան և յարգեցին մեր սիրեցեալ ամուսնոյն, հոր և հարազատին՝ որդեգրեալ **ԳԱԼՈՒՍՏ ՊԱՊԵԱՆԻ** յիշատակը:

Քառասնօրեայ հոգեհանգիստը պիտի կատարուի կիրակի, 3 Սեպտեմբեր, 2017-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Սուրբ պատարագին: Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ: Սգակիրներ՝ Կինը՝ Յասմիկ, զաւակները՝ Սարիկ, Վարազ Պապեան - համայն Պապեան, Պարսումեան Քելէշեան - Սերոբեան ընտանիքներ:

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ
Դերակալութեան "Arthur Montreal" հաստատութիւնը կարիք ունի դերակալներու, կարողներու և ձեռողներու: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին:
TAILORS & SHIRT MAKERS NEEDED
"Arthur Montreal" Bespoke Tailors & Shirt Makers are looking for experienced seamstress, cutters and tailors. If interested, please call 514-843-0522.

SUDOKU - ՍՈՒՏՈՒՄ

Աստիճանաւորում՝ միջին

8								
			6			1	2	5
	4					6		
7			4	9	8			1
3	6		7				4	9
				8			5	
	2	1	8	5	3			
5		9				4		
6	3				2			

horizon
H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Eshramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարչ խմբագիր՝
Վահագն Գարապաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշոպեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան
Չեւաղորում՝ Նէմսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝
Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գարուստ Պապեան, Վազգէն Տէլիլիբեան, Բազում

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտի 20 Ապրիլ) - Փորձե՛ք անելի համարձակ ըլլալ: Անելորդ մանրամասնություններով մի՛ գբաղիր, կարիքը չկայ այդքան դիրագգաց ըլլալու: Երկմտությունը անդին նետե՛ եւ յառաջացիր յարաբերութեանդ մէջ: Ժամանակ տրամադրե՛ սիրային կեանքիդ:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Ամպոտ է սիրային կեանքդ այս շրջանին, բախտաբեր չէ այս ժամանակաշրջանը եւ ջղային կը դարձնէ քեզ: Վերջերս հին իրավիճակներ կը պրպտես եւ անմիաստ տեղը կ'անհանգստանա: Երբեմն անցեալը պէտք է փոշիի տակ ձգել:

ԵՐԿՈՒՐՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Այս շրջանը շատ նպաստաւոր է մօտեցում ցուցաբերելու եւ համերաշխութեամբ գոյակցելու կողակցիդ հետ: Հակառակ ունեցած անիմաստ տատամսումներուդ պիտի յայտնուի, թէ սիրեցեալդ անհամբեր կը սպասէ, որ դու ըլլաս նախաքայլը առնողը:

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Շուարած ես այս շաբաթ, հարցումներու տարափ մը կը տողանցե՛ մտքիդ մէջ եւ կը չարչրկե՛ քեզ: Սիրեցեալիդ հետ յաճախ բախումներ պիտի ունենաս, սակայն մի՛ մտահոգուիր, կեանքի ընկերդ պիտի փորձէ չափազանց հասկացողութիւն ցուցաբերել:

ԱՌԻԺ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Աշխոյժ ես այս շաբաթ եւ կենսուրախ: Շուրջիններդ վերջապէս պիտի գնահատեն քու գեղեցիկ ներաշխարհիդ, բարիութիւնդ եւ հրաշալի բնաւորութիւնդ: Զիչ մը հոգ տանելու ես արտաքին գեղեցկութեանդ, արտաքինը ներքինը թափանցող հայելին է:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Ձերմ հանդիպում մը պիտի ունենաս, որ հին, խամրած եւ մոռցուած զգացում մը պիտի արթնցնէ մէջդ: Այս հանդիպումը պիտի փոխէ ամբողջ կեանքի ուղիդ: Շուրջիններուդ հետաքրքրութեան առարկայ պիտի դառնաս:

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) - Ռոմանթիք շաբաթ մը պիտի ունենաս: Հետեւաբար փորձե՛ բոլոր խոջընդոտները վերացնել եւ սիրեցեալիդ հետ հաճելի պահեր ապրիլ՝ հեռու առօրեայի տաղտուկէն եւ իրարանցումէն: Ճակատագրական որոշումներու շաբաթ մը պիտի ըլլայ:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Դու թաշտեղեակ ես, որ յամառութիւնը միշտ կը վնասէ սիրային յարաբերութեանդ: Կը սիրես միշտ քու կարծիքդ պարտադրել եւ իշխող հանդիսանալ: Այս մէկը պատճառ կը դառնայ ձեր միջեւ անհամաձայնութիւններու, հետեւաբար անելի հասկացողութիւն ցուցաբերել:

ԱՐԵՂԱՎՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Սիրտդ կը թռչնայ նոր եւ զօրաւոր զգացումներով, կարծես կ'ուզես ամբողջ աշխարհը ընդգրկել: Շաբաթը շատ նպաստաւոր պայմաններ պիտի ստեղծէ քեզի համար՝ ըմբռնելու կեանքն ու բնութեան գեղեցկութիւնները:

ԱՅԾԵՂՁԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Շատերու կը հանդիպիս, նոր անձնաւորութիւններու, որոնք մէջդ նոր զգացումներ կ'արթնցնեն: Եթէ կապուած չես եւ սիրոյ ծարաւը կը զգաս, այս շաբաթ անպայման պիտի հանդիպիս երկրորդ կէտիդ եւ հաւանաբար շուտով լուրջ քայլ մը առնելու որոշում առնես:

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Դժուարութիւն ունիս սիրեցեալիդ հետ հասկցուելու, կը մեղադրես զինք անտարբերութեան եւ սառնասրտութեան, նոյնիսկ անտեսումի համար: Բուռն վեճեր կը ծագին, բայց այս բոլորին հիմնական դրդապատճառը քու անկայուն վիճակդ է:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Բացառիկ շաբաթ մը կը սպասէ քեզ, բոլոր ասպարեզներուն մէջ յաջողութիւն պիտի գտնես, յատկապէս՝ սիրային յարաբերութեան հարցով: Հրաշալի պահեր պիտի ապրիս սիրեցեալիդ հետ, կը թարմանան բոլոր զգացական ապրումներդ:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Վարուժան Չալքեանի մահուան առթիւ
 Եղուարդ, Մարո Ֆրոնճեան 50
Գեղջ, Տէր Նորայր Եպս. Ալքեանի Հոգւոյն
 Թորոս, Անի Պապիկեան, զ.կ.բ., Լենա Պապիկեան, Ռաֆֆի, Հրիսիմէ, Պապիկեան դուստր,
 Կիրո, Նայիրի Նազարեան, զ.կ.բ., 500Լիզպոնի մէջ զոհուած 5-ին՝
Սարգիս Աբրահամեանի, Վաչէ Տաղբեանի, Սիմոն Եանճեանի, Սեդրակ Աճէմեանի, Արա Գրեղեանի
34-րդ տարեկիցին
 Վերոնիք Մնակեան 20
 Վաչէ Տամբեան 25
Հայկ Սարգիսեանի 10-րդ տարեկիցին
 Տիգրան Սարգիսեան, ընտք. 200
 Արամիկ Սարգիսեան, Մակի Սարգիսեան
 Տ. եւ Տ. Տարոն Սարգիսեան, զ.կ.բ., ձորձ, Մովսիկ Սարգիսեան, զ.կ.բ., 100
Ժողէֆին Բարունակեանի 9-րդ տարեկիցին
Մուշեղ Մնակեանի, Պետրոս Մանկիկեանի, Պողոս, Հերմինէ Զոպուեաններու Հոգւոյն, Զոպուեան, Մնակեան եւ Յակոբեան գերդաստանաց ննջեցեալները
 Վերոնիք Մնակեան 25
 Թագուհի Մանկիկեան 20
 Տ. եւ Տ. Վաչէ Տամբեան 25
 Յակոբ, Տիգրակ Մանկիկեան 50

Հերմինէ Քէլպազեանի Գէորգեանի 40-ին
 Ալտա, Կարո Գէորգեան 40
 Միսիսեան ընտանիք 30
 Վերա Ղազարեան 25
 Տ. եւ Տ. Յակոբ Աճէմեան, զ.կ.բ. 10
 Ուսանող Մուշեղեան, զ.կ. 20
 Տ. եւ Տ. Հրաչ Գէլպազեան, ընտք. 30
 Տիգրանուհի Պարսամեան 20
 Սարգիս, Մարի Մոնճեան 20
 Տ. եւ Տ. Մանուկ Գալուստեան 10
 Տ. եւ Տ. Յարութ Գանիկեան 10
 Տ. եւ Տ. Ջողէֆ Օճանեան 20
 Սարգիսեան ընտանիք 10
 Զապէլ Ասատրեան 20
 Յարութ Քէլպազեան 50
 Նորա Գէորգեան 40
 Տ. եւ Տ. Վրդէն Գէորգեան 20
 Տ. եւ Տ. Գէորգ Փարթեան 20
 Տ. եւ Տ. Սահակ Մարտիրոսեան 20
 Տ. եւ Տ. Ջորձ Պալտոնեան 20

Յովիկ, Նելլի Պարսեմեան 30
Յովիկ, Անի Համբեան 20
Էֆրոն Սանդեանի Ա. տարեկիցին, նաեւ
Թաշեան, Լուսինեան, Սանդեան, Մահակեան գերդաստանաց Հոգւոյն՝
 Աւետիս, Մարալ, Տիգրան, Ռաֆֆի Թաշեան,
 Աբրահամ, Թալին Թաշեան 60
 Միհրան, Վրէժուհի, Տիգրան, Նայիրա Սանդեան 30
 Անդրանիկ, Պէրճուհի Մահակեան 20
Լիզպոնի Հերոս՝ Սիմոն Եանճեանի եւ իր ընկերներուն նահատակութեան 34-րդ տարեկիցին, նաեւ Մանկիկեան, Մնակեան, Եանճեան գերդաստանաց ննջեցեալները
 Յակոբ, Տիգրակ Մանկիկեան 50
 Հրայր, Լալէ Եսփոնճեան 40
Տիգրուհի, ձորձ Գալայեաններու Հոգւոյն
 Տ. եւ Տ. ձագ Գալայեան 100
 Տ. եւ Տ. Ռուբէն Գալայեան 100
ձորձ Նաբոյի 7-օրէքին (Հալէպ)
 Վահէ, Ռիմ, Միշէլ, Նուր Նաբոյ Արսլանեան 40
 Տ. եւ Տ. Յովան Սանդեան 10
 Տ. եւ Տ. Պետրոս Եղորճեան 20
 Տ. եւ Տ. Մովսէս Արզարեան 20
Գառնիկ, Արշալոյս Թորիկեաններու եւ Թորիկեան գերդաստանի Հոգւոյն, Յակոբ, Սիմոն, Լեւոն, Միստիս, Լուսին եւ Սոնա Թեքեաններու Հոգւոյն
 Թորոս, Անի Պապիկեան 100
 Նազար, Էֆրոն, Աւետիս Ջարմեաններու
 Կարապետ, Անճէլ, Յակոբ Պուրուսուզեաններու,
 Սահակ Ապուլապուտեանի Հոգւոյն
 Կարո, Սեւան Ջարմեանեան 20
Մանուկ եւ Վարդուհի Մարկոբեաններու, Մաթէոս, Մկրտիչ, Արշակուհի, Արմէնուհի
Մարկոբեաններու, Պետրոս Պիտոյեանի Հոգւոյն
 Տ. եւ Տ. Աւետիս Մարկոբեան եւ զ.կ.բ. 100
 Արփի Մարկոբեան 50
 Յակոբ, Ուսանող Մանուկեան 60
Զապէլ Հայկազեան ձորճեանի Ա. տարեկիցին, Կարապետ ձորճեանի Հոգւոյն
 Ենուկ, Ջարուհի, Ստեփան, Թամար Աճարոնեան 60
 Վահէ, Մարինէ Աճարոնեան, զ.կ.բ. 40
 Գրիգոր, Աշխէն Աճարոնեան 50
Անահիտ, Ասել Ոսկերիկեաններու

Հոգւոյն
 Ռաֆֆի, Մանուշակ Ոսկերիկեան 30
Կարապետ Արսլանեանի Հոգւոյն
 Պէտրոս Արսլանեան 30
Հայկ Ղազարեանի 4-րդ տարեկիցին առթիւ
 Վարսենիկ Ղազարեան 30
 Յակոբ, Անուշ Ղազարեան, զ.կ.բ. 40
Եկեղեցւոյ պայծառութեան՝
 Պերճ Միսաբեան 200
»Տէր Ողորմեա՛ի խնդրանքով
 Մի Ռմն 20
 Մի Ռմն 10
Փոխան խաղողի
 Ժողէֆին Մարկոբեան 20
 Վարուժ Գիշեան 20
 Ուսանող Մանուկեան 20
 Սեպուհ, Աշխէն Գալապեան 20
Սեդրակ Էքեղեանի Հոգւոյն
 Սոնիա Էքեղեան, զ.կ.բ.՝ Միզան, Ռիշար 50
Երեցուհի Նուարդ Փափազեանի Ա. տարեկիցին
 Ժողէֆին Թումայեան, զ.կ.բ. Ռաֆֆի, Ռոնի 100
 Սարգիս, Անահիտ, Ժան, Կարո Ռիշեան 100
Արմէն Մեղրեանի Հոգւոյն
 Հրայր, Լիլիան Պէնկեան, զ.կ.բ. 100
Արմենակ, Էլիզապէտ Գորեաններու Հոգւոյն
 Սուզան Գորեան 500
Միհրան Նշխանի 3-րդ տարեկիցին առթիւ
 Սարա Նշխան 30

Ս. եւ Տ. Գէորգ Նշխան 30
Տ. եւ Տ. Միհրան Նշխան 20
Տ. եւ Տ. Անդրանիկ Նշխան 20
Տ. եւ Տ. Վրդէն Պասմանեան 20
 Սարգիս, Անի Նշխան եւ զ.կ.բ. 20
 Նազար, Սիրոն Նշխան եւ զ.կ.բ. 20
 Յակոբ, Սեւան Նշխան եւ զ.կ.բ. 20
 Տ. եւ Տ. Վրդէն Պասմանեան 20
 Լուսին Մարտիրոսեան, զ.կ.՝ Սասուն 20
 Անուշ Փարթեան 20
 Սեպուհ, Աշխէն Գալապեան 20
 Ջարուհի Մարտիրոսեան Լրմէ 25
Սարգիս, Եղիաբէթ, Ջազար, Գրիգոր Ետեաններու,
Անուշան Սուրբասեանի Հոգւոյն
 Նշխան ընտանիք 50

Ռոզին Էլեանի մահուան 7-օրէքին (մահացած Հալէպ)
 Յովհաննէս, Լենա, Գէորգ, Լարա, Հուրի Էլեանեան,
 Միսա, Ռոզալին Տաթևեան 20
 Տ. եւ Տ. Ներսէս Սիմոնեան, զ.կ.բ. 20
Լուիսի ձորճեանի 4-րդ տարեկիցին, Մկրտիչ, Ալպեր, Մարի, Սեյիտի ձորճեաններու, Լեւոնը Պողիկեանի Հոգւոյն,
ձորճեան, Պողիկեան գերդաստանաց

ննջեցեալները
 Անահիտ, Լենա ձորճեան 50
 Սիլվա ձորճեան 25
 Մայր, Կրասիա ձորճեան 50
 Maroun & Suzy Abou Faysal 50
Անի Գոնթըրբասի Հոգւոյն (մահացած Լոս Անճելոս)
 Նուէր Շաթրոյեան 40
 Տ. եւ Տ. Մհեր Շաթրոյեան 30
Ջարեհ Չիլիկեանի Բ.տարեկիցին, Սարգիսեան, Չիլիկեան, Պղտիկեան,
Ալաճանեան գերդաստանաց ննջեցեալները
 Լեւոն, Ալիս Սարգիսեան, զ.կ.բ. 100
Լեւոնը, Շահան, Ժանէթ Պողիկեաններու Հոգւոյն
 Սիլվա ձորճեան, զ.կ.բ.՝ Ռիթա, Շահան, Ժանին 25
Թաղէս Թաղէսեանի 4-րդ տարեկիցին
 Միքայէլ, Ժանէթ, Սիմոն, Պերճ Թաղէսեան 50
Անդրանիկ Լամբրեանի Հոգւոյն
 Մայր, Կրասիա ձորճեան 50
Սիլվա Գալապեան Արամի 5-րդ տարեկիցին
 Սահակ Արամ, Գէորգ, Մարիս, Սիմոնի Պիմեան,
 Վահէ, Արէն Արամ 100
Հայկ Մարգարեանի 5-րդ տարեկիցին
 Անահիտ Մարգարեան, ընտք. 200
Միհրանուշ Գոյուճեանի Հոգւոյն (մահացած Լոս Անճելոս)

Ուսանող, Սարգիս Գոյուճեան 50
 Բերուգ Պուրուզեան եւ Սարգիս Գոյուճեան
 Գրիգոր, Անի Գոյուճեան 50
Սիլվա Սարգիսեանի Ա. տարեկիցին
 Տ. եւ Տ. Ռաֆֆի Պասմանեան 40
ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՖՈՒՏՅՈՒՆ
Շաքէ Օճանեան Պէլգեանի մահուան առթիւ
 Պէլգեան ընտք. 1000
 Գօգօ, Էրիզա Սալաուտրեան (ձորճեան) 50
 Գէորգ, Նորա Գարբիէլեան 50
 Մարալ Գերճեան 30
 Տ. եւ Տ. Վրդէն Յովսէփեան 50
 Կարո, Հերա Նոյնուտեան 40
 Նաիրա Ժամկոչեան (Լոս Անճելոս) 100
 Ռաֆֆի, Հերա Մերաբեան 100
 Սահակ, Թալին Սէպեան, զ.կ.բ. 50
 Տ. եւ Տ. Յարութին Քէլեան 100
 Յասմիկ Շատալեան 50
 Վաչէ, Յասմիկ Մելիքեան 50
 Տ. եւ Տ. Տօքթ. Մանուէլ Քէօսեան 50
 Պերճ, Նայիրի Ջարճեան 30
 Սահակ, Սեդա Աբրահամեան 100

Սիմոն, Յասմիկ Պատուր 50
 Տ. եւ Տ. Յարութ Չաթիմեան 20
 Տ. եւ Տ. Յակոբ Աղալլա 30
 Տ. եւ Տ. Սերբ Գարայեան 20
 Յուրակ, Անճէլ Պետրոսեան 100
 Մեսրոպ Նազարեան 25
 Ալպէր, Սոնա Նաչերեան 20
 Ներսէս Հատիտեան 25
 Յակոբ, Մարալ Նազարեան 50
 Արէզ, Քրիսթին Մարգարեան 100
 Տ. եւ Տ. ձագ Սահակեան 100
 Տ. եւ Տ. Յակոբ Մանկիկեան 50
 Աղանի, Նուշիկ Էլոյեան 50
 Գասարեան ընտք. 100
 Տ. եւ Տ. Ռաֆֆի Արանեան 50
 Տ. եւ Տ. Տիգրան Աճարոնեան 20
 Տ. եւ Տ. Գէորգ Օճանեան 50
 Յովհաննէս Նահարեան 25
 Տ. եւ Տ. Գրիգոր Փանոսեան 100
 Տ. եւ Տ. Կարպիս Եսայեան 50
 Վարդան, Նայիրի Բարսիսեան 100
 Եղուարդ, Արփի ձիգմէճեան 100
 Բողին Թորոսեան 30
 Տ. եւ Տ. Լեւոն Եղաճեան 30
 Տ. եւ Տ. Յակոբ Պուլկարեան 100
 Կիրակոսեան ընտք. 100
 Տ. եւ Տ. Լէւոն Արապեան, ընտք. 100
 Ջոն, Գոհար Օճանեանեան 50
 Տ. եւ Տ. Գէորգ Գալուստեան 50
 Տ. եւ Տ. Գէորգ Քէօսեան 50
 Տ. եւ Տ. Նազար Սահակեան 30
 Տ. եւ Տ. Արման Սելէն 100
 Գէորգ, Թալին Քիչիքիճեան 100
 Տ. եւ Տ. Ռուբէն Ազարեան 50
 Սամ, Էմմա Գորուճուղլու 100
 Տ. եւ Տ. Պարոյր Գալանեան 50
 Յարութ, Հէլէն Արամեան 50
 Վրդէն, Սիւրան Քիւփեյեան 100
 Ռիթա Օճանեան 50
 Միքէլեան ընտք. 60
 Գարուդեան ընտք. 50
 Գամէր Գալիստեան 60
 Տ. եւ Տ. Սահակ Սիմանուղլուան 25
 Տ. եւ Տ. Գրիգոր Մէլիքեան 100
 Տ. եւ Տ. Պարոյր Փանոսեան 50
 Պաղտիկ, Սիլվի Օճանեան 50
 Լեւոն, Լենա Տէմիրճեան 50
 Աբրահիմ Գարուդեան 50
 Տ. եւ Տ. Արտո Գարբիէլեան 30
 Տ. եւ Տ. Տանթ Թուրքի 200
 Բարգէն, Արմինէ, Լեւոն, Սոսէ, Լենիա Կարապետեան 150
 Վարուժակ Իսկէճեան 40
 Տ. եւ Տ. Սամիր Գասարեան 50
 Տ. եւ Տ. Վարուժան Փանոսեան 50
 Կարո Գարաբըթիսեան 50
 Տ. եւ Տ. Զակէն Արզումանեան 50
 Ազատուհի ձորճեան 25
 Կարո, Անի Գարեան 50
 Տ. եւ Տ. Եսուր Թիւֆէնկի 50
 Սարգիս Գէտիքեան, ընտք. 50
 Յակոբ Տէր Վարդանեան, ընտք. 20
 Արա, Անի Օճանեան 50

Ascenseur **Adams** Elevator

Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.

Eddie, Pedro, Joyce Oughourlian



Innovate
pour exalter

L'ÉVÉNEMENT
**ÉQUIPÉ
POUR L'ÉTÉ**
DE NISSAN

OBTENEZ JUSQU'À
5 000 \$*

de rabais au financement à un taux standard sur les modèles 2017 sélectionnés. (Le rabais de 5 000 \$ s'applique aux modèles Altima et Maxima.)

GRUPE NISSAN
GABRIEL



Sentra SR turbo illustrée *

SENTRA SV
À BOÎTE AUTOMATIQUE

Location à partir de **214 \$** par mois, avec comptant initial de 995 \$.

C'EST COMME PAYER

49 \$*
/SEMAINE

PENDANT

39
MOIS

OU OBTENEZ

4 000 \$* DE RABAIS

AU FINANCEMENT À UN TAUX STANDARD (sur les Sentra SR Turbo)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**, AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**

MICRA SV À BOÎTE AUTOMATIQUE

Location à partir de **161 \$** par mois, avec comptant initial de 995 \$.

C'EST COMME PAYER

37 \$*
/SEMAINE

PENDANT

39
MOIS

OU OBTENEZ

2 000 \$*

de rabais au financement à un taux standard (excluant le modèle S à boîte manuelle)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**, AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



Micra SR illustrée*



Qashqai SL Platine illustré*

LE TOUT NOUVEAU QASHQAI

Prix à l'achat à partir de

19998 \$ + 2065 \$ = 22063 \$*

(frais de transport et autres frais)

au total pour le Qashqai S

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

*Des conditions s'appliquent. Taxes en sus. Offre d'une durée limitée et applicable uniquement sur les modèles sélectionnés et sujettes à changements ou annulation sans préavis. Visitez votre concessionnaire Nissan Gabriel Jean Talon ou Nissan Gabriel Anjou pour les détails.



BARRY KAREN GARO
KAZANDJIAN

 RÉCEMMENT VENDU	 À VENDRE 589 000 \$	 À VENDRE 3 950 000 \$	514 333-3000 DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE	
 À VENDRE 1 899 000 \$	 À VENDRE 399 900 \$	 RÉCEMMENT VENDU		
 À VENDRE 599 000 \$	 À VENDRE \$749 000 \$	 RÉCEMMENT VENDU	 à partir de 288 2055 +TPS/TVA	
 À VENDRE 279 000 \$	 À VENDRE 998 000 \$	 RÉCEMMENT VENDU	 À VENDRE 499 000 \$	 À VENDRE 1 198 000 \$
 À VENDRE 1 350 000 \$	 À VENDRE 579 000 \$	 RÉCEMMENT VENDU	 RÉCEMMENT VENDU	 À VENDRE 575 000 \$
 À VENDRE 449 000 \$	 À VENDRE 849 000 \$	 À VENDRE 798 000 \$	 À VENDRE 549 000 \$	 À VENDRE 799 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5